



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1066

613.22
90-22

2002

6/3.22

90-22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱԴՐԻՁԻ ԼԱՄԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԴԱԿՏՈՐ Կ. Յ. ՓԱՃԱՅԵԱՆ

ԵՐԵՎԱՆԵՐԻ ՄՆՈՒՆԴԸ

ԾՆՈՒՆԴԻՑ ՄԻՆՉԵԿ 15 ՏԵՐԵԿԵՆ ՀԱՅԵՐ

Եկեղեց Տօնագործություն իւսունանի հեղինակ
կիմ և վեռապահած:

Ա. Է. Ք Ս Ա Ն Գ Բ Յ Պ Լ

Առաջատար Յանի Ափինեանցի

1903

Վ 666

ՀՀԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԹԱԽԻՁԻ ԼԱՄԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

610
ԶՕԴ-ԳԱ

6/3.22 առ 824
գիշ-29

ԴԱԿՏՈՐ Կ. Յ. ՓԱՃԱՅԵԱՆ

ԵՐԵՒԱՆԵՐԻ ՄՆՈՒՆԴԸ

10431
1003

ՃՆՈՒՆԴԻՑ ՄԻՆՉԵԿ 15 ՏԵՐԵԿԵՆ ՀԵՍՈՒՔ



Երեսոյ սպազմութեան իրաւունքը նեղինա-
կին է վերապահուած:

Ա Լ Ե Ք Ս Ս Ն Դ Ր Ա Պ Օ Լ
Արագատիս Յովին. Ալիքնեանցի
1903

16283

018
ԱՓ-402

ՎԱՐՉՈՒԹ ԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Թաւրիզի Լուսանական ընկերութեան վարչութիւնը գեռ
1900—1 տարեցրչանից որոշել է տպագրել զասախօսութիւն-
ներից նրանք, սրոնք տեղական կարիքներ են շօշափում և
օգտակար կը լինին աւելի լայն շրջաններում տարածւելով:

«Երեխաների սնունդը» առաջին գործն է:

Վարչութիւնս իր չնորհակալութիւնն է յայտնում պ.
բժիշկ Կ. Յ. Փաշայեանին, սր գրքոյկիս ձեռագիրը տեսց
ձրիաբար:

Վարչութիւն:

1903. Յունիսը.

Дозволено Цензурою. Тифлисъ, 28-го Февраля 1903 г.

Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Դոկտ. Պէրիէրի (Hygiène Alimentaire des enfants) և Դոկտ. Պօլէնի և Դոկտ. Լարիի (Hygiène Alimentaire) հետևողութեամբ կազմելով այս գիրքը, նուիրում ենք հայ ծնողներին:

Երեխաների կրթութեան մէջ մեծ դեր է խաղում սր-նունդը. միայն Պարիզի մէջ մեռնող երեխաների 100-ին 80-ը մեռնում են մնունդի գէշութիւնից. Փրանսայի նման քաղաքակիրթ մի երկրում երբոր վատ կարգադրւած մնուն-դի հետհանքով երեխաների այսքան մեծ տոկոս զո՞ն է տըր-ւում, արդեօք մեր հայերի մէջ, ծնողների տղիառութեան հե-տեանքով, այս զո՞ների թիւը նրան աւելի բարձր է:

Այս գիրքը գալիս է մի մեծ պակաս լրացնելու երեխա-ներին մնուցանելու խնդրում. մինչև ցարդ երեխաների սր-նունդին յատուկ այսքան մանրամասն մի զրուածք հայերի մէջ լոյս չէ տեսիլ: Այս գիրքը ծնողներին իբրև առաջնոր-դու պէտք է ծառայէ, ամեն մայր իր մանկան օրօրոցի մօտ պէտք է ունենայ այս գրքից մի օրինակ, և ամեն պարա-գայի դիմէ նրան, երեխայի զանազան տարիքներին հետեւով:

Դոկտ. Կ. Յ. Փաշայեան

1 Յունիս 1903 թ.
Թ. Ա. Կ. Բ. Է. Զ.

ԵՐԵՒԱՆԵՐԻ ՍՆՈՒՆԴԸ

ԱՌԵՋԻՆ ՄԱՍ

ՕՐԴԱՆԻԶՄԻ ԵՒ ՄՆՈՒՆԴԻ ԲԱՂԵԴՐՈՒԹԻՒՆԸ

Ա.

Երեխան էլ մեծի նման օրական կորցնում է բաւական չափով նիւթեր, որոնք գանւում են իր օրգանիզմի մէջ: Այս կորուստը տեղի է ունենում, նրա համար, որ մարմինից բնական ճանապարհներով դուրս են գալիս անալէտք դարձած նիւթեր, ինչպէս կղկղանք, մէզ, բըտինք, խուխ, եայլն: Կեանքը օրգանիզմի մէջ սպառում է որոշ նիւթեր և առաջ է բերում քայլայւած աւելորդ մասեր: Այսպէս ասած, օրգանիզմի որոշ մասերը մաշտում և հինանում են, և միւս կողմից այդ քայլայւած մասերը վերանորոգում են: Ահա այս պական են լրացնում և վերանորոգութեան գործին նպաստում օղը և սնունդը:

Մարմինից արտաքսւած նիւթերը չը կարծի թէ բոլորովին անալէտք բաներ են, զրանք օրգանիզմին անհրաժեշտ նիւթեր են և պէտք են գալիս նրա աճումին և զարգացումին. այդ տարրերը եթէ պէտք չը լինէին, հարկ չէր մնում նրանց տեղը լրացնել սնունդով: Բայց հարց է թէ՝ քանի՞ որ այդ տարրերը օրգանիզմին հարկաւոր են գալիս, ապա ուրեմն

ինչու համար նա դրանց արտաքսում և նորից պահանջ է զգում: Այս հարցը պարզելու համար կը պատասխանենք, որ այդ տարրերը կեանքի պայմանների համեմատ օրգանիզմում այնպիսի փոփոխութիւններ են կրում, որոնք իրենց այդ ձևափոխութեան մէջ օրգանիզմին օգտակար լինելուց դադարում են, և նոյն իսկ նրանց, օրգանիզմում ներկայութիւնը մեծ վնասներ է առաջցնում, և դրա համար էլ մարմինը իր միջից արտաքսում է իրեկ վնասակար այդ տարրերը և բնական ճանապարհներով նորից է ստանում:

Օրինակ, մէզով արտաքսւած նիւթը, որի մէջ 14 և կէս գրամ ըորակածին առաջ ամենաօգտակար մի տարր է զըստնուում, եթէ մարմինից գուրս չգայ, առաջցնում է յօղային կաթած (goutte), միզաքար կամ միզասազ (gravelle), և այլ վտանգաւոր հիւանդութիւններ:

Այս արտաքսւած նիւթերի մէջ զտնուում են բորակածին, ածխածին, ջուր և աղեր. սրանք օրգանիզմի ամենաանհրաժեշտ տարրերն են կազմում, եթէ սրանցից մին բացակայի, կեանքը գոյութիւն չի ունենալ. բայց ինչպէս ասացինք, նրանց կրած կերպարանափոխութիւնը արգելք է լինում, որ նրանք օրգանիզմին ծառայեն, նրա պէտքերին գոհացում տան:

Մի չափահաս մարդ ամեն օր իր մարմինից գուրս է արտաքսում 20 գրամ, (4,68 մսխալ) բորակածին, 310 գրամ (72,54 մսխալ) ածխածին, 2 կամ 300 գրամ (468-ից 702 մսխալ) ջուր և 30 գրամ (7 մսխալ) աղեր: Բորակածինը արտաքսում է մէզով 14,5 գրամ (3,8 մսխալ) և կղկղանքով, խուխերով, մորթի միջոցով 5,5 գրամ (1,28 մսխալ), գումար 20 գրամ (4,68 մսխալ), իսկ ածխածինը՝ շնչառութեամբ 250 գրամ (58,5 մսխալ), երիկամներով 45 գրամ (10,5 մսխալ), գոլորշիներով, կղկղանքով, խուխերով 15 գրամ (4 մսխալ), գումար 310 գրամ (72,54 մսխալ):

Երեխան իր գոյութիւնը պահպանելու համար, օրգանիզմի այս կոսցրածի տեղը պէտք է լրացնէ մննդառութեամբ. ոչ թէ միայն իր կորցրածը նորից ձեռք պէտք է բերէ, այլ և իր ածեցումը և զարգացումն էլ հոգալու է. որտիհետեւ, երեխան իր գոյութիւնը պահպանելու հետ միասին միենայն ժամանակ իր գործարանական շնչըն շինում: Այնպէս, որ ինդիրը երեխային տրեւիք մնունդի քանակութեան վրայ է, այս երկու գործօնները նկատի առնելով պէտք է որոշել:

Իսկ երբ որ խնդիրը մնունդի որակութեան վրայ է, մանկան ածեցումը նկատի ունենալով, նրան պէտք է տալ այնպիսի մնունդ, որը կարողանայ հայթայթել նրա օրգանական կազմի մէջ գտնուած միեւնոյն տեսակի նիւթեր: Մանկութեան զանազան շրջանների միջոցում բաւարար մննդառութեան զատնիքը դրա մէջ է կայանում, նոյնպէս այդ բանից է կախուած կազմական հիւանդութիւնների, մանաւանդ զարգացման շրջանին պատկանող հիւանդութիւնների զարմանը:

Ուրիմն, անհրաժեշտ է օրգանիզմի կազմութեան մասին մի ճշգրիտ զարգափար կազմել, իմանալու համար թէ այդ մեծ շնչըն շինելու համար ինչ տեսակ նիւթեր-մնունդ-է հարկաւոր:

Բ.

ԳՈՐԾԱՐԱՆԱՒՈՐ ԲԶԻՃՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ. — Մեր մարմինը ինչից է բացկացած: Ամենավերջին վերլուծումով ինչ է գտնուում գործարանաւոր նիւթի հիմնական կազմի մէջ, որի ամենաատարբական բջիջի տիպը պրօտոպլազման է: Սրա շնչընի մէջ գտնուում են անզործարանաւոր (հանրային) և գործարանաւոր տարրեր:

Անգործարանատը տարրերը աղերից կջուրից են բազկացած։
Իսկ գործարանատը տարրերը երկու տեսակ են, բորբակածնային և ոչ-բորբակածնային։ Առաջինները իրենց մէջ ունին բորբակածին, թթվածին, ջրածին և ածխածին և մի քիչ էլ ծծումբ կամ լուսածին (phosphore)։ Իսկ ոչ-բորբակածնայինները առաջիններից տարրերւում են միայն այն բանով, որ իրենց մէջ չեն պարունակում բորբակածին, մի-հետոն բաղադրութիւնը ունենալով հանդերձ։

Ուրեմն, ապրող բջիջները բազկացած են ջուրից, աղերից, բորբակածնային և ոչ-բորբակածնային նիւթերից։

Ահա այս բջիջները իրար մօտ զալով և համախմբւելով կազմում են մարմինի ամբողջութիւնը։

Ապրող բջիջների նախնական տարրերի մասին վնասոյիշեալ ծանօթութիւնը տարուց յետոյ, երեխայի սնունդը ընտրելու խնդիրը բաւական պարզում է։

Երեխան բորբակածնային նիւթերից քաղում է իր մարմինի զանազան մասերը կազմելու անհրաժեշտ տարրերը։

Օրինակ, մկանունքների համար, նեարդային խողովակների, արեան գնդիկների, հայլի կազմութեան համար անհրաժեշտ տարրերը (myosine, lécithine, fibrine, hemoglobin)։

Երեխան ոչ-բորբակածնային նիւթերը քաղում է իւղից և ջրածխային (hydrocarbure) նիւթերից, որոնք միևնույն ժամանակ ջերմութեան մի աղբիւր կը լինեն և այդ ջերմութիւնը հարկաւոր է նամանաւանդ սննդառական ներքին գործողութիւնների կատարման համար։ Իսկ իր ոսկորների շէնքին անհրաժեշտ տարրերը գտնում է աղերի մէջ։ Վերջապէս ջուրը գալիս է բոլոր այս գործողութիւններին իրեն միջնորդ ծառայելու և նպաստելու սնունդների իւրացման (assimilation), այսինքն ըրգանիզմի զանազան մասերը կազմելու, և աւելորդ մասերի արտաքսում են (désassimilation)։

Մեր հիւսւածների այս նախնական տարրերը գտնուում են սննդառութեան ծառայող նիւթերի մէջ։ միայն հարկաւոր է խմանալ յարմար չափերով նրանց միացնելը։ Դրանուում է կայանում առօրեայ սնունդի չափը և տեսակը, այսինքն ուժում կազմելը։

ՈՉ-ԲՈՐԲԱԿԱԾՆԱՅՑԻՆ գործարանաւոր տարրերը գտնուում են կարագի, ճարպի, բուսային խղերի, չաքարի, նշայի, խէժի մէջ։ Իսկ բորբակածնային նիւթերը սրանցից գուրս մնացած բոլոր սնունդների մէջ գտնենում են, օրինակ, միս, կաթ, պանիր, խղ, բանջարեղին, կաֆէ, թէյ, ևայն։

Աճող ու զարգացող օրգանիզմը բորբակածնային նիւթերի միծ կարիք ունի. և այս շատ հասկանալի է, եթէ նկատի առնենք մկանունքների կշիռը, որովհետեւ միսերը այդ նիւթից են բաղում իրենց շէնքի հիմնաւոր տարրերը և մի երեխայ ծնելիս 600 գրամ (1½ գիրւանկայ) ծանրութեամբ միս ունի, իսկ չափահաս եղած ժամանակ այդ ծանրութիւնը բարձրանում է 30 քիլոյի (75 գիրվանկայ), այսինքն 50 անդամ աւելի շատ։

Բացի այդ, օրգանիզմը աւելի պէտք ունի կենդանային ծագում ունեցող բորբակածնային նիւթերի, որոնք թէկ բուսայինների չափ բորբակածնից հարուստ չեն, սակայն աւելի հեշտ են մարսում և օրգանիզմի մաս կազմում, այսինքն իւրացւում։ որտ պատճառը այն է, որ նրանց կազմակերպող տարրերը մի այնպիսի կազմակերպութիւն են ստացել, որ աւելի են մօտենում մեր օրգանիզմին։ Օրինակ 65 գրամ (15,21 մսխալ) բորբակածնային նիւթեր պարունակող միսը աւելի սննդարար և աւելի հեշտամարս է, քան թէ նոյնիքն բորբակածնային նիւթեր (legumine) պարունակող լորիան, թէկ երկուրն էլ իրենց մէջ պարունակում են 1 գրամ (0,23 մսխալ) բորբակածին։

Իւղային նիւթերը, ինչպէս Գէրօվի և Փլամանի վերջին

փորձերը ցոյց են տալիս, մեր օրդանիզմի մէջ մասսամբ այլուում են և մասսամբ հաւաքուում: Խւղերը ծառայուում են կաղմելու արեան, ոսկրածութի, նեարսլային գրութեան, և այլնի բջիջները. ուրիշ մնունպներից աւելի խւղերի յարումով է, որ տաքութիւն է առաջ դալիս, այսինքն ոյժ և շարժում:

Ուրեմն, պարզ է, որ սրանք երեխային անհրաժեշտ են: Երեխան արգին իր նախնական մնունպների մէջ նրանց պատահում է, նախապէս իր բացարձակ մնունպը կազմող կաթի մէջ, ձուի, միսի, և մինչեխոկ հացի և հացահատիկների մէջ:

ԶՐԾԴԽԸՑԻՆ նիւթերը՝ շաքար, նշայ, խէժ՝ կաթի մէջ մի այնպիսի թւով են գտնուում, որ նրանց խրացումը շատ է հեշտանում. սրանք թէ երեխայի և թէ չափահասի համար խնայողութեան նպաստող ճշմարիտ տարրեր են, և արգիլում են օրդանիզմում գտնող խւղի և բորակածնային տարրերի բայրայումը: Բայց հարկաւոր է, որ նրանց համեմատական չափը պատշաճ լինի, որովհետեւ նրանց չափազանցութիւնը գժուաբամարտութիւն է պատճառում: Սրանք զիկոզի (խաղողի շաքար) վերածւելուց յիտոյ միայն արեան մէջ են մտնում, որոնց մեծապոյն մասը այրուում և արտաքսուում է իրքի ածխաթթու և ջուր:

ԱՉԵՐՔ բջիջների ատաղին են կազմում և նպաստում սննդառութեան. սրանք անհրաժեշտ են հիւսւածների կաղմութեան մէջ: Գլխաւորապէս երկու տեսակ աղեր աւելի օգտակար են, հաստրակ աղը (chlorure de sodium) և լուսածնայինները (phosphate): Հաստրակ աղը ստամոքսի մարսողական հիւթի խլորաթթուն (acide chlorhydrique) է պատրաստում. առանց այդ խլորաթթուի բորակածնային նիւթերը մարսելի չեն կարող դառնալ: Խոկ լուսածնային աղերը ոսկորների կազմւելուն են նպաստում: Ոսկորների ամբողջութիւնը նոր ծնւած ժամանակ 450 գրամ (105,3 մսխալ) է կշռում, իսկ չափահասութեան միջոցում 11 քիլո

560 գրամի (131 մսխալ) է բարձրանում. ուրեմն ոսկորները այդ աղերից խրացնում են 11 քիլոյից աւելի: Ծծկեր երեխան մի լիզը (234 մսխալ) կաթից ստանում է 4-ից 5 գրամ (0,93-ից 1,17 մսխալ) հեշտ խրացնելի աղեր, և աւելի յետոյ աւելի շատ, նայած մարսելի կերակուրների չափին: Այս աղերի կրային (chaux) մասերը ոսկորների, պօտասայինները մկանունների և սովոյինները արեան մէջ են գտնուում: Այս լուսածնային աղերը իրենց պարունակած լուսածին տարրերով, նեարդային գրութեան կազմութեան են նպաստում:

ԶՈՒՐՔ սննդառութեան գործողութեանց իրքի միջնորդ է ծառայում՝ երբոր ջրի չափը անբաւական է լինում, խրացումը և արտաքսումը խանգարուում են և սննդառութիւնը վատ է լինում: Զուրք մորթային և չնշառական չոգիայումներին և երիկամնային արտաքսումներին նպաստում և մէգով արտաքսուած բնամէզի (urée) չափը աւելացնում է:

Բուշօ գտել է, որ ծծկեր երեխան իր ստացած մի լիզը (234 մսխալ) կաթից 643 գրամ (150,4 մսխալ) մէզ է արտադրում: Կեանիքի առաջին օրերում մէզի չափը 12-ից 36 գրամ (2,8-ից 8,4 մսխալ) է այդ չափը երեխայի ստացած կաթի քանակութեան համեմատ աւելանում է և մարմինի կշիռին համեմատ չուտով է բարձրանում 60—70—80 գրամի (16,3-ից 18,6 մսխալ) և աւելի: 8 օրւայ երեխան մորթային չնշառութեամբ 24 ժամւայ մէջ 55 գրամ (12,8 մսխալ) չուր է արտաքսում:

Կէմլնէր (Camener) երեր ամսական երեխայի համար արտաքսուած ջրի չափը 225 գրամ (52,6 մսխալ) է նշանակում, այսինքն խրաքանչիւր մի քիլո ծանրութեան բաղդատմամբ 37 գրամ (8,5 մսխալ). 5 տարեկանի համար 641 գրամ (150 մսխալ), այսինքն մի քիլո կշիռի համեմատ 35,6 գրամ (8,2 մսխալ) և 11 տարեկանի համար 644 գրամ (150,7 մսխալ), այսինքն մի քիլո ծանրութեան համեմատ

27,5 զրամ (6,4 մսխալ): Երեխայի կղկղանքներին 100-ին
85-ը ջուրից է բաղկացած, մինչդեռ այս համեմատութիւնը
չափահանների համար 100-ին 25 է:

Ուրեմն, երեխան, համեմատած իր մարմինի կշիռքին,
չափահանից աւելի ջրի պէտք ունի. ջրի զրկումին երեխան
չէ դիմանում, այդ բանը հաստատում է երեխանների խոլե-
րայի մէջ չուտահաս մահով, այդ հիւանդութեան մէջ կըրկ-
նող լուծմունքները և փսխումները մարմինի ջրին արագ
սպառում են պատճառում:

¶.

Մարմինի և մնունդների մէջ դժնուող զանազան նախ-
նական տարրերի ինչ բանից բազկացած լինելն մինչեւ ցարդ
մեր ասածներից լաւ պարզւեց: Նրանք օրգանական պէտ-
քերին համապատասխանելու համար որոշ չափերով պէտք է
միանան, այնպէս, որ նրանց ամբողջութիւնը բառին բուն
նշանակութեամբը մի մնունդ կազմէ, այսինքն բորբակածնային
նիւթերի, իւղի, շաքարի, ջուրի և աղերի չափերը միմեանց
հետ պատշաճաւոր համեմատութիւն ունենալու են:

Մնունդների կազմակերպող մասերի միջև եղած համե-
մատութեան պակասը, կարող է, մնունդի նուազութեան նման
մարմինի քայլայումը կամ հիւանդութիւններ առաջ բերել:
Ուրեմն, հարկաւոր է համեմատական մի չափ պահպանել բո-
րբակածնային և ոչ—բորբակածնային նիւթերի միջև, իւղային,
նշային և հանքային (ջուր, աղեր) նիւթերի միջև:

Եյս համեմատութիւնը հրաշալի կերտով երեան է գալիս
կնոջ կաթի մէջ: Ուրեմն մի ակնարկ ձգենք բնականից կա-
տարեալ մնունդի յատկութիւն ունեցող այս կաթի բազկադրու-
թեան վրայ, որը կեանքի որոշ մի շրջանի մէջ նպաստում է
երեխային մնունդառութեան և զարգացման:

Կնոջ կաթը պարտնակում է:

2,26 բորբակածնային նիւթեր.

3,94 իւղ.

6,20 ջրածխային նիւթեր.

12,40 գումար:

Իյս գումարից երեսում է, որ բորբակածնային նիւթերը,
միւս՝ նիւթերի հետ համեմատած հինգերորդ մասն են կաղ-
մում: Կովուկաթի մէջ այս համեմատութիւնը մէկ չորրորդ է,
այդ որն բնա պէտային և պանիրային տարրերը միւս տար-
րերը՝ բազկատամբ աւելի շատ են, այս պատճառով կովու
կարել առանց շաքարաջուր աւելացնելու փոքր երեխաններին
չէ կարելի տալ:

Ուրեմն, որանից կարելի է հետեցնել, որ գէթ ման-
կուկ եան ժամանակ բորբակածնային նիւթերի համեմատու-
թիւնը մէկ հինգերորդ պէտք է լինի:

Արգէն, շատ Մոլեշոտի (Moleshott) կատարելագործւած
օրգանիզմը իր բազալրութեան մէջ պարսնակում է ¹⁵ մաս
բնասպիտ (ալեսուն, բորբակածնային): Ուրեմն, մի մաս
զուտ բնասպիտի համար հինգ մաս ոչ—բորբակածնային (նշային
նման) նիւթեր են հարկաւոր. Բէնքէ (Benke) ցոյց է տևել,
որ այս համեմատութեան խանգարւելով, այսինքն չորսի իշ-
նելով կամ վեցի բարձրանալով, մարմինը վնասում է:

Եւ այս ոչ—բորբակածնային նիւթերի հինգ մասն էլ
չէ կարելի միմիայն շաքարից կամ իւղից ստանալ: Իւղերի
ծծման մէջ մի որոշ սահման կայ, այդ սահմանից աւելի
իւղերը չեն ծծւում, վնաս են պատճառում, ինչպէս, շատ
իւղալի կաթը ուտող երեխանները իւղալի կղկղանքներ են
ունենում: Ջարարը նոյնպէս չէ կարող բոլորովին իւղի տեղը
բռնել, որովհետեւ, իւղը՝ ի միջի այլոց արեան զնտիկների և
նեարգային տարրերի կազմութեան մէջ անհրաժեշտ է: Իւղը
նոյնպէս ծառայում է մարմնի մէջ պահեստի մաս կազմելու՝

պղարտացնելու, մինչդեռ շարարը ջրի և ածխաթթուի է վերածում: Բորակածնային նիւթերը պղարտացման չեն նպաստում, այլ մասնաւորապէս աճող օրգանիզմի պահանջներին բաւարարութիւն են տալիս:

Եթէ ճոխ և հարուստ կերակուրներով օրգանիզմի մէջ բորակածնային նիւթեր շատ են մտցրում, սրանք անկատար կերպով են թթուածին ծծում և հետեարար միզային թթուն (acide unique) աւելանում է և սրանից էլ առաջանում են, այսպէս առած, հարստութեան հիւանդութիւններ (maladies de richesse), մեզուազ յօդային կաթուած, հայլի: Իսկ ընդհակառակը երբոր ոչ-բորակածնային կերակուրները մեծ տեղ են բռնում, առաջ են գալիս աւշային թոյլ կաղմւածք, խոյլախտ և մարմինը ենթակայ է լինում ախտածին միկրօրների աւերումներին, սրանք էլ կոչւում են թշուառութեան հիւանդութիւններ (maladies de misère) երկու ծայրայեզութիւններ, որոնք առաջ են գալիս բորակածնային և ոչ-բորակածնային նիւթերի միջև որոշ համեմատութիւն՝¹⁵, գոյութիւն չունեալուց:

Եզրակացութիւնը պարզ է: Երեխայի ըէժիմը պատշաճորէն կարգադրելը որքան կարեռութիւն է ստանում: Երեխայի օրգանիզմին կաղմակերպւելիք իւրաքանչիւր մասը իրեն անհրաժեշտ եղող տարրերը պէտք է ծշտապէս գտնէ մարսողական հիւթի մէջ, իրեն կարիքներին բաւարարութիւն շը տւած գէպում և կամ կարիքից աւելին գտնւած պղարդայում, օրգանիզմի. հաւասարակշռութիւնը կորսում է և վերոյիշեալ երկու կարգի հիւանդութիւնները առաջ են գալիս: Այս պատճառով է, որ արհեստական դիեցումը (կաթտալը) և կանխահաս կերակրելը նորածիններին վնաս են պատճառում, որովհետեւ դրանք իրենց պղարունակած նիւթերով աւելի մեծերին են յարմարում:

ԵՐԿՐՈՐԴԻ ՄԱՍ

ԵՐԵԽԵՐՆԵՐԻ ՅԱՐՄԱՐ ՈՒՏԵԼԻՔՆԵՐ

Ա.

ԿԱԹ.—Կաթը կատարեալ մի մնունդ է, որովհետեւ իր մէջ պղարունակում է բնասփոտ, պանիր, կարագ, կաթնաշաքար (lactose), և վերջապէս ջուր և աղեր, որոնք նոյնպէս օրգանիզմին հարկաւոր են գալիս:

Կարագը, սերը և պանիրների մի բանի տեսակները առաջին (մինչև 2 տարեկան) և երկրորդ (2-ից 15 տարեկան) մանկութեան մէջ իրրի մնունդ կարենը դեր են խաղում:
Հարագը հացի հետ միասին թէ առողջ թէ ապագինման (հիւանդութիւնից նոր վերկենալ) ժամանակ երեխաների համար սրանչելի մի մնունդ է կաղմում, պայմանով, որ թարմ և չխարդախւած լինի:

Կաթի երեսից վերցրած սերը յարմար է, բայց երեխաներին տրւելու համար մեր յիշած սերը այս չէ: Սովորական սերը, ինչպէս յայտնի է, բաղկանում է կարագից, պանիրից և կաթնաշրից: Այս գրքում ամեն անդամ, որ սեր խօսրը գործ ենք ածում, պէտք է հասկանալ 100 աստիճան տաքացրած (եռալու աստիճան) կաթի, շաքարի և ձուի զեղնուցի խառնուրդը: Այս սերն է, որ երեխաներին ծծից կտրելուց յետոյ յարմար է գալիս:

Պանիրների մէջ թարմ տեստիները երեխաներին յարմար են գալիս, աղով կամ շաքարով համեմելով հեշտ են մարսում:

ՉՈՒ.—Չուն ևս կաթի նման կատարեալ մի մնունդ է և երեխաներին շատ յարմար, պայմանով, որ թարմ և հաւիլինի: Մննդագրաբութեան կողմից մի ձուն հաւասար է 100 գրամ

(23,4 մսխալ) կաթի կամ 30 զրամ (7 մսխալ) միսի: Որպեսն թոյլ եփած լինի, այնքան հեշտամարս է լինում:

ՄԻԱ.—Երեխաների համար ամենայարմար միսը ջիղերից դատւած կարմիր մասերն են: Լեարդը, երիկամը, ևայն, անյարմար են, իսկ ուղեղը կարելի է տալ: Գառան կօտէտները մանաւանդ փոքր երեխաների համար հեշտամարս են, իսկ ոչխարի միսը աւելի մեծ երեխաներին յարմար է իր մննդաբար յատկութեամբ: Հորթի միսը, մանաւանդ եթէ կինդանին շատ մատղաշ է, երեխաներին լուծմունք է պատճառում և գժուար մարսում:

Եղան միսը իր շատ մննդաբար յատկութեամբ 5 տարեկանից վեր երեխաներին յարմար է:

Խողի միսը թէկ աւելի շատ մննդաբար է, բայց երեխաներին, մանաւանդ առաջին տարիներում, բնաւ յարմար չէ:

Թհաւորների մէջ միայն վառեակի միսն է երեխաներին յարմար գալիս, իսկ պարարտ հաւերը, աքալաղաղը, հնդկանաւը, բաղը, սակը գժուարամարս են:

Որսի միսերի մէջ երեխաներին յարմար են խորոված մատղաշ կաքաւը, լրրամարզին, տորդիկը և փոքր թռչունները, ինչպէս արտօյտ, ժուլակ, զբախտապան, ևայն:

Երեխաները որսի մազոտ անասունների միսը չեն կարող մարսել, ինչպէս վարագ, այծեամ, նապաստակ, որոնց միսը երեխաների կերակուրներից տէտք է հեռացնել:

ԶՈՒԿ.—Զուկերը իրենց զանազան տեսակներով և հեշտամարսելի յատկութեամբ երեխաների մնունդին մէջ մեծ տեղ են զբառում: Բայց աւելի նախապատռութիւն պէտք տալ փափուկ և սպիտակ միս ունեցողներին. իսկ իւզոտ ձուկերը (mulet, maquereau, thon, Morue) ընդհանրապէս գժուարամարս են: Անուշ ջերի ձուկերի մէջ երեխաներին յարմար են զալիս կարմրախայտը (truite), պէրկէ (perche), զմարիտ (éperlan), խարակաձուկ (goujon):

Չուկերի միսը պէտք է թարմ լինի և երեխաներին տրւելու ժամանեակ, փուչերի պատճառով մի փանկ չի պատասհելու համար մեծ զգուշութիւն է հարկաւոր:

Ազած չորացրած, համեմած և ընդհանրապէս տուփերի մէջ պահնած միսերը շատ գժուարամարս են և երեխաներին անյարմար: Զուրի մէջ ապրով խեցաւոր կենդանիները մեծառով գժուարամարս և երեխաներին անյարմար են:

ՄԻԱԾ.—ՊԱՏՐԸՍՑՈՒԹԻՒՆԸ. — Մարսելիութեան տեսակէտով միսի պատճառատութիւնը մեծ նշանակութիւն ունի. սովորաբար նկատի են առնելում ճաշակի հաճելի և ախործելի լինելը քան թէ երեխաների մարսովութեան յարմար զալը: Առանց ստամորսը յոպնեցնելու մննդառութեան անհրաժեշտութիւնը պահնանջում է իմանալ պատճառատելու ամենալաւ եղանակը այն է, որ ուրիշ որի է նիւթ աւելացնելու կարիք չէ զգացւում, օրինակ, կարագի, խոզի, ալիւրի, հայլի աւելացում, որոնք առնուազն միսի կազմութիւնն են այլափոխում:

ՅՈՒՄ ՄԻԱԾ.—Գատ յարմար, զիւրամարս և մանաւանդ լուծմունք ունեցող երեխաներին շատ օգտակար է: Եղան թարմ սուկին (filet, բասկա) իր բոլոր ջիղերից, խոզերից զատելով ծեծում և յետոյ չաքարի փոշու կամ բաղցրեղինի հետ խառնելով երեխաներին են տալիս: Բայց ափսոս, որ հում միսը տափակ ճճի (toenia) է գոյացնելու և շատ անգամ էլ կոնու թոքախոտը երեխային է փոխանցնում. այս պատճառով մսափոշի են տալիս: Մսափոշին տներում հետեւալ կերպով է պատճառատուում. նախապէս եռացրած զուրի մէջ մի մեծ կտոր միսը խաչելուց յետոյ մանր մանր կտրատել և խոհանոցի փռան մէջ չորացնել. փոշիացնելու համար կաֆէի պղացով բաշել կամ միսանդի մէջ թակել բաւական է:

ՄՄԱԶՈՒՐ.—Թէկ այնքան մննդաբար չէ, բայց մարսութիւնը հեշտացնելու է և ստամորսային նիւթի արտա-

գրումը աւելացնում. մանաւանդ, տեսնդային հիւանդութիւնների մէջ երեխայի կորցրած աղային նիւթերի պակասն է լրացնում: Մսաշուր պատրաստելու համար մի մաս մանր կտրատած միսը երեք մաս սառ ջրի մէջ դնելով 5—6 ժամ խաշելու է: Ծծից կտրելու ժամանակ շատ անզամ երեխան կաթից զգւում է, կամ նոյնիսկ կաթը երբեմն լուծմանը է տալիս. այս դէպքերում եթէ կաթի հետ մսաշուր խառնի, երեխան ընդունում է մարտում է: Աւելի յարմար է սովորական մսաշուրից առաջ ճուտի ջուր տալ: Խորոված միսի ջուրը շատ աւելի սննդարար է, կամ ճնշելով այդ ջուրը քաղելու է և կամ երեխային ծամել և ծծել տալու է, միշտ միսը դուրս տալու պայմանով: Կարմրցրած հացով կամ անշաքար և լաւ կարմրած ոռվարիով պատրաստած մսաշուրի ապուրները (սուլ) շատ յարմար են. հացի աել կարելի է դորձածել տապիօկա, սազու, և այն:

ԽԸՆԸԾ ՄԻԾ.—Մի մեծ կտոր միս սառ ջրի մէջ զընելով խաշելու է: Երեխաներին անյարմար է, աւելի մեծերը կտրող են ուտել:

ՃՈԳԻՈՎ ԵՓԸԾ ՄԻԾ.—Գոց ամաների մէջ շոգիով եփած միսը շատ յարմար է երեխաներին, որովհետեւ միսի մասերը կակում են և ծամեն ու մարսելը հեշտանում է:

ԽՈՐՈՎԸԾ ՄԻԾ.—Սպիտակ միսերը միշտ կրտկով խորովելու է, սննդարար և յարմար է:

Միսի ուրիշ տեսակ պատրաստութիւնները, աղած կամ չորացրած միսերը շատ դժուարամարս լինելով երեխաներին անյարմար են:

Բ.

Երեխաների սննդառութեան մէջ մեծ տեղ են բռնում հացը, և բոլոր պիւրային, ոսլային և խմորեղին պատրաստութիւնները:

ՑՈՐԵՆԱԼԻՒԹ. — Հաց պատրաստելու համար ամենայարմարն է կարծր ցորենի պիւրից շինւած հացը կակուզ ցորենի պիւրից շինւածից աւելի լաւ է:

ԳԱՐԵԸՆԻՒԹ. — Կճեպները հանւած գարիից շինւած պիւրը՝ ապուրների կամ կաթի հետ խառնելով երեխաներին յարմար ուտելիք է պատրաստում:

ՎԱՐՄԱԿԱԼԻՒԹ. — Յարմար է երեխաներին և ստնտուներին:

ԵԳԵՊՏԱՑՈՐԵՆԻ ԱԼԻՒԹ. — Թէկ շատ սննդարար է, բայց նրա համը ամեն երեխայի գիւրեկան չէ գալիս:

ԲԲԻՆՉ. — Երեխայի սնունդի մէջ մեծ դեր է խազում, օգտակար մի սնունդ լինելով մանում է թեթև և ախորժելի կերակուրների պատրաստութեան մէջ:

ԳԵՑՆԱԽՆՉՈՐ. — Հացից յետոյ ամենաշատ գործածւած մի ուտելիք է, ինը առանձին այնքան սննդարար չէ, բայց միսի հետ և ձուկի հետ միացած շատ հեշտամարս մի կերակուր է լինում:

ՏԱՊԻԾԱԿ. — Կաթի կամ մսաշուրի հետ խառնւած փոքր երեխաների համար առաջին ապուրն է կազմում:

ԱՐԱՐՕՏ. — Բոլոր երեխաների համար հեշտամարս և ախորժելի է: Նոյնպէս է սագուն (sagou):

ՍՍԼԵՊ. — Թեթև, սննդարար և հաճելի մի սնունդ է. հարկաւոր է երեխաների ուտելիքների մէջ մտցնել:

ՃԵԳՆԱԿ. — Ճրի մէջ խաշածը հեշտամարս է և սննդարար, իր մէջ երկաթ պարունակելով, լուծմոնրից նիհացած երեխաներին օգտակար է: Հումը կամ աղանձածը դժուարամարս է:

ԽՄՈՐԵՎԵՆՆԵՐԸ, կարգանտակները երեխաների համար աւելորդ և անյարմար են: Միայն Բիւրկիւտ կարելի է տալ, և այն էլ իրրի նախաճաշ կամ ընթրիք, բայց երկու ճաշերի միջև բնաւ տալու չէ:

ԽԵՒԾ.—Երեխանների համար ամենայարմար մի կերակուր է: Աղիսիւ ալիւրով և կաթով պատրաստած խիւսը 6-ից 8 ամսական երեխաններին կարելի է տալ: Պատրաստելու համար, մի քիչ աղ և շաբար աւելացրած ջրախառն կաթի մէջ մի քանի թէյի գտալ լաւ ալիւր խառներով թէյի կրակի վրայ մի քառորդ ժամի շափ եփելու է: Կրակի վրայ կարմրացրած կամ միայն հացի արդէն կարմրած մասերը առնելով էլ կարելի է պատրաստել: 7 տարեկանից վեր երեխաններին կարելի է տալ վէլմիշէլէ ապուր, և ալիւրից, ձուի դեղնուցից և կաթից պատրաստած կարկանդակ:

Գ.

ԱԼԵՒՐՈՑ ԿԱՆԱՆՉԵՂԵՆՆԵՐ.—Երենց մէջ ալիւրային և ոսլային մաս պարունակող լորիայի, բակլայի և սասպի նման չոր կանանչեղինները մէծ երեխաններին տալ կարելի է, միայն լաւ եփած և ապուրի ձեր տակ և կամ կճեպները հանելով ճմլած *) (purie) վիճակի մէջ պէտք է տալ: Այս կանանչեղինները շատ մննդարար են և իրաւամբ առքատի միս են կօշուում. մանաւանդ ոսպը իր մէջ 100-ին 25 բորակածնային նիւթ և բաւականաչափ երկաթ պարունակելով, երեխաններին, մասնաւորապէս արեան պակասութիւն ունեցողներին և ծծմայրերին կարելի է յանձնաբարել:

Այս շոր բուսային նիւժերը թարմ և կանանչ վիճակի մէջ աւելի նախապատելի են, պայմանով, որ փափուկ, լաւ եփած և ճմլած լինին:

ԹՅՐՄ ԵՒ ԿԱՆԱՆՉԵՐՈՑ ԲՈՒԽԵՂԵՆՆԵՐ.—Սրանց զանազան մասերն են գործածւում, արմատը, ցողունը տերերը, միջուկը, հային: Սրանք կարելի է տալ միայն ծծից կտրւած երեխաններին, մինչդեռ չոր տեսակները, ինչպէս տեսանը, վեց ամսականից ոկտած կարելի էր տալ ապուրի ձեր տակ:

*) Լաւ խաշելոց յետոյ արսուում են մսաջրի կամ կաթի հետ:

Այս թարմ կանանչեղինները երեր մէծ խումբերի են բաժանւում: 1) Բուսական բնասպիտից և բորակածնից հարուստ եղողներ, կաղամբ, ջրկոտեմ (cresson), ծնկերել, ոռնիկ, թալլ (truffe), սրանիր շատ մննդարար բայց մինչոյն ժամանակ շատ էլ գժուարամարս են: 2) Այս խումբի մէջ են գտնւում հուզային և զանազան աղերով հարուստ կանանչեղինները հազար (քեանաւ, սալատ), սպանախ, եղերդ (chicorée), կանկառ, խոշոր զգում (potiron), կարկոս (céleri, քէրեկիղ) և արմաններ, ստեպպին (գազար) շողզամ, հային: 3) Այս խումբի մէջ են գտնւում թթուններից հարուստ կանանչեղինները, թրժնչուկ, տօմատ (կարմիր պամիփոր):

Այս երեր խումբերից միայն նրանց մասին կը խօսենք, որոնք երեխաններին կարելի է տալ:

Ծներեկը (մէլէչուա) թէկծի, առողջաւէտ և սրանչելի մի ուտելիք է, ուղեղային գործնէութեան աշխոյժը աւելացնում և լուծմունք չէ տալիս. խաշած վիճակի մէջ երեխաններին յարմար է: Կաշամը, ջրկոտեմը, թայլը, սոմկը գժուարամարս լինելով վնաս են տալիս. երեխաններին ընաւ տալու չէ:

Երկրորդ խումբին պատկանող կանանչեղինները լաւ եփած և կաթով կամ մսաջուրով պատրաստած վիճակի մէջ երեխաններին յարմար են, հազարը (քեանու) հում վիճակի մէջ կարելի է տալ միայն ամեն բան ուտելու վարժուող երեխաններին: Աւելի յարմար է այս երկրորդ խումբի կանանչեղինները, մանաւանդ արմանները լաւ եփած և ճմլած վիճակի մէջ երեխաններին տալ: Այս խումբին պատկանող վարունկը փոքր երեխանների ստամոքսին անյարմար է գալիս: Մէծ և փոքր զգումները (couurge) կաթի հետ ապուր պատրաստելով շատ հեշտամարս են լինում և երեխաններին ախորժելի: Թրթչոչովը և տօմատը երեխաններին չը պէտք է տալ, միայն կարելի է նրանց ջուրով ապուրները և ուտելիքները համեմել:

Յիշած բոլոր այս յարմար կանանչեղինները երեխաներին կարելի է տալ միայն խաշած և եփած վիճակի մէջ, ապուրի կամ ճմլած ձեռվ կամ միսի հետ:

Պ.

ՊՏՈՒՂՆԵՐ.—Երեխանները շատ կանուխից պտուղների համար մի մասնաւոր փափաք են ցոյց տալիս: Պտուղների ընտրութիւնը նրանց առողջարար և օգտակար յատկութեանց վրայ պէտք է կատարել:

Պտուղները թթու, շաբարոտ, անուշահոտ, ալիւրոտ, խղոս, պնդացնող յատկութիւններ ունին, որոնք յարմար կերպով խումբերի բաժանելը շատ դժուար է: Թթու պլատողները հուզային և շաբարոտ մի հեղուկի մէջ բուսային թթուներ (acide tartrique, malique, acétique, citrique) են պարունակում: Այս կարգի պտուղներից հետեւալները երեխաններին յարմար են, նարինջ, անանաս, հազարջ (groseille) կեռաս, ելակ արքայամոր (framboise), գեղձ, խնձոր: Նարինջը երեխանների ծարաւն է յագեցնում և միմնոյն ժամանակ իր պարունակած շաբարով և խէժով սնունդ է տալիս: Հիմննը տենդային հիւանդութիւնների մէջ իրեւ լիմոնագ երեխաններին շատ օգտակար և հաճելի է. շատ մայրեր տենդային հիւանդութիւնների մէջ իրենց երեխաններին թթու խմելիքներ տալուց վախենում են, այդ աւելորդ և անտեղի մի վախ է, 'ի զուր ծարաւից և տենդից խեղճ փորբիններին տանջում են. թթու խմիչքները զովացնող են և օգուտից բացի ոչ մի վնաս չեն տալիս:

Կեռասը, ելակը, արքայամորը, հաղարջը եթէ լաւ-հասունացել են և կուտերը ելած չափաւոր են գործածում վնաս չեն տալիս. հասունացած խնձորը լաւ ծամող երեխաններին է յարմար, բայց խաշածը, կօմպօտը, մարմրադղը,

անուշը (մուրաբա), մէլին բոլոր երեխանները կարող են ուտել, նոյնիուկ հիւանդ և ապագինած երեխանները, եթէ բրծիչկը արգելը չէ զրել: Դեղջը պտուղներից ամենահամեղը և ամենալավն է, եփած կամ լաւ հասունացած և փոքր երեխանների համար մի քիչ շաբարոտած գեղձը սքանչելի է:

Ճաքարոտ պտուղների թթու մասը անդգալի է գառնում նրանց պարունակած շաքարի, հուզի և բուսալիւրի պատճառով, ինչպէս խաղող, չոր կամ թարմ թթուզ, սալոր, տանձ, արմաւ, հայն: Երեխանների համար անյարմար և գժուարամարս են շամիչը, սեխը, արմաւը. իսկ տանձը, խաղողը, թթուզը, սալորը հասունացած վիճակի մէջ յարմար են, մանաւանդ խաղողը, որ ծառայում է իբրև մննդաբար, ախորժառու, մարսեցնող և ուժատու մի նիւթ, պայմանով, որ կուտը և կճեպը հանւի:

Պնդացնող յատկութիւն ունեցող պտուղների մէջ սերկելիլը երեխաններին հում չը պէտք տալ, այլ ժէլէ կամ կօմպօտ վիճակի մէջ:

Անուշահոտ պտուղների մէջ ծիրանը լաւ հասունացած վիճակի մէջ երեխաններին քիչ չափով տրւելով անվնաս է դառնում, մանաւանդ եփածը աւելի դիւրեկան է գալիս:

Իւզոտ պտուղներից ընկոյզը, նուշը, կաղինը, գժուարամարս են. փոքր երեխաններին վնասակար են, իսկ մեծերն էլ պէտք է լաւ ծամեն և թարմերի կճեպները հանեն:

Ե.

ՀԱՄԵՄԱՆՔ.—Ընդհանիրապէս բոլոր գրգռիչ նիւթերի նման համեմանքներից չափազանց զգոյշ պէտք է լինել և մանաւանդ երեխանների համար ընտրել այնպիսինները, որոնք կարող են անվնաս և օգտակար լինել: Պղպեղը, մանանեխը, հնդկապղպեղը (պէնջէֆիլ, géngembre) երեխանների սեղանի վրայ չը պէտք է գտնւին, օգուտից աւելի վնաս են տալիս:

իսկ վանիլը, քացախը, լիմոնը իրենց յարմար տեղը օգտակար են: Համեմանքների մէջ շաքարը և աղը օրդանիզմի համար ճշմարիտ պահանջներ են:

Աղը սովորութիւն գարձած աւելորդ մի դարդ չէ, ինչպէս են միւս համեմանքները, այլ հանրային ճշմարիտ մի որնունդ է, որից զրկուելը օրդանիզմի համար մեծ տանջանք է: Աղը մարսողութեան համար անհրաժեշտ է, որովհետեւ ստամոքսի մարսողական հիւթին հարկաւոր եղած խլորաթթուն նաև տալիս, նոյնպէս արեան կարմիր գնդիկները աւելացնում կամ պահպանում է:

ՃԵՔԵՐԸ միենոյն ժամանակ և համեմանք է և մնունդ, բայց ոչ աղի չափ կարեոր. որովհետեւ, օրդանիզմի բաղդրութեան մէջ է մտնում աղը, մինչդեռ շաքարը ջուրի և ածխաթթուի է վերածւում: Բայց այսուհանդերձ, շաքարը մինչև ծծից կտրելը երեխայի աղն է: Ճաքարով կարող ենք լինում երեխաներին վատահամ գեղեր տալ և առաջին ապուրները դիւրեկան անել: Բայց երեխաներին չափազանց շաքար չը պէտք է տալ, տաքայնում, ստամոքսը խանդարում և տատաներին է մնասում: Փոխանակ զուտ շաքար տալու, նրանով պատրաստուած անուշեղիններ կարելի է տալ:

ՔԵՑԱՂԸ թթու համեմանքների տիսն է, զսվացնող, զրգուիչ և հականեխող յատկութիւն ունի. ստամոքսի հիւթի մէջ թթուի պակասութեան պատճառով առաջացած ստամոքսային խանդարումների մէջ մեծ օգուտ է տալիս: Միւս թթուներն էլ քացախի նման են:

ՎԵՆԻԼԸ, կասին (տարշին) և մշկընկոյզը (muscade) անուշահատ համեմանքներից լինելով, երեխաների կերակուրների մէջ աւելի շատ գործ են ածւում: Մրանք աւելի մեծ արժէք ունին և աւելի յարմար են քան թէ նոյնատեսակ ուրիշ համեմանքներ, ինչպէս ազատքեղ (չափնէրի), տափնի, անիսօն, և այլն, կամ թէ սոխ և սխտորի նման կծու և հո-

տած համեմանքներ, որոնք փոքր երեխաների կերակուրների մէջ մտցնելու յանցանիքը գործելու չէ: Նոյնպէս երեխաներին չէ կարելի տալ թուրշիններ և ուրիշ տեսակ համեմանքներ:

¶.

ՃԵՂՈՒԿ ԸՄՊԵԼԻՆԵՐ. — Խմելիք հեղուկները երեխաների մննդառութեան առողջապահութեան մէջ, տռողջ կամ հիւանդ ժամանակ, մեծ դեր են խաղում: Երդարի երեխաների տռաջին մնունդը՝ կաթը՝ հեղուկ է. նոյնպէս ծծից կտրել պատրաստելու ժամանակ նրանց կէս—հեղուկ վիճակի մէջ մսաջուր և ապուրներ ենք տալիս: Խմելիք հեղուկները երեր տեսակների են՝ բաժանում, հասարակ ջուր, քաղցրահամ ըմպելիններ և սպելից խմիչքներ:

ՃՈՒՐԸ մեր օրդանիզմի նախակազմող տարրերից մին է և մննդարական զործողութեան մէջ մեծ դէր է, խաղում, այնպէս, որ ջրից զրկուելու գէպքում, երեխաները չափահաներից աւելի են նեղուում: Նորածին երեխան կաթի մէջ է զրտնում իրեն անհրաժեշտ եղած ջուրը, 90 տա 100: Երեխային հարկաւոր է տալ միշտ մաքուր, զտուած և եռացրած ջուր:

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՇԲՆԵՐ ընաւ հարկաւոր չեն զալիս երեխաներին, նոյն իսկ մեասակար են: Նրանց փափուկ և դիւրազգայ նեարդային զրութիւննը զրգուիչների ընաւ պէտք չունի, նրանց նեարդները խմիչքներից խորին կերպով ազգուում և մնասուում են: Երեխաներին սպելից խմիչքներ տալը միմիայն բժշկի զործն է, նա է խմանում թէ ինչ տեսակ տկարութեանց մէջ իրը դեղ հարկաւոր է տալ, որ տեսակից և ինչ չափուի: Ոգելից խմիչքների մասին Փօնսագրիվ արգարացի կերպով ասում է, «մի դեղ է, որը երբ որ վատ են զործածում թոյն է զանուում. մի թոյն է, որը երբ որ լաւ են զործածում դեղ է զանուում:»

ՔԱՂՅՐԱՀԱՄ ԸՄՊԵԼԻՆԵՐԻ թէյ և սուրճ երեխաներին չըպէտք է տալ, սրանը էլ նեարդների գրգռում են պատճառում. հիւանդութեան դէպէկերում միայն բժշկի խորհրդով կարելի է տալ. մեծ երեխաները կարող են չափաւոր կերպով գործածել, իսկ փոքրերին նոյնիսկ կաթով թէյ կամ սուրճ տալու չէ. կաթը բաւական է:

Այս կարգի ըմպելիներից միայն կարելի է տալ կակաօ և շօկօլաղ: Առաջինը մննդաբար մի նիւթ լինելով, կաթի և շաբարի հետ միացած երեխաների համար մի սքարչելի նախաճաշ է կազմում: Իսկ շօկօլաղը շաբարով պատրաստուած կակաօյի մի տեսակն է:

ԵՐՐՈՐԴ ՄԵՍ

ՇԹԵԶԻՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՄԵՆԿՈՒԹԵՅՆ ՄՆՋԻՆԴԻ

Ա.

Գործնական սնունդներից ընդհանուր կերպով երեխաներին յարմար եկածները որոշելուց յետոյ, այժմ տեսնենք թէ առաջին մանկութեան, ծծից կտրելու և երկրորդ մանկութեան ժամանակ երեխաների սնունդը ի՞նչպէս և ի՞նչ պէտք լինի:

Մինչեւ 2 ՏԾՐԵԿԱՆ ԸՌԱԶԻՆ ՄԵՆԿՈՒԹԵՅՆ ՄՆՋԻՆԴԻ: Երեխայի առաջին կերակուրը կաթն է: Կաթը կատարեալ մնունդ լինելով, առանձին կարող է երեխային մնուցանել: Բոլոր կաթերի մէջ նորածին երեխային յարմար և լաւագոյն կաթը կնոջ կաթն է, և մօր կաթը ստնտուի կաթից միշտ աւելի բարձր է: Երբ որ մայրը բանաւոր պատճառներով իր երեխային չէ կարող կաթ տալ և ստնտու վարծելու էլ կարութիւն չունի, այն ժամանակ ընտանի անասուններից մէկի

կաթը տալով արհեստական դիեցման կը դիմէ: Նաև պարագաներ կան, որ մայրը օրուայ որոշ ժամերին իր ծիծն է տալիս, և որոշ ժամերին անասունների կաթը: Ուրեմն երեք տեսակ դիեցում կայ, բնական, արհեստական և խառն:

Բնական դիեցումն էլ երկու կերպ է, մայրական և ըստնտուով:

ՄԱՅՐԱԿԱՆ ԴԻԵՑՈՒՄ. — Երբ որ մայրը առողջ է, պարտաւոր է իր երեխան ինքը դիեցնել, երեխան աւելի է օգտուում բնութնան կողմից իրան յատկացւած մօր կաթից, քանի թէ ուրիշ կաթերից:

Երեխան ծնւելուց մի քանի ժամ յետոյ մայրը պէտք է ծիծ տայ: Այս առաջին ծծումները կաթի իջնելուն նպատառում են, եթէ մօր կաթը մինչև 3 կամ 4 օր չիջնայ, լաւագոյն է տալ իշու զուտ կաթ և կամ ջրախան կովու կաթ, փոխանակ երեխայի ստամօրսը շաբարաջրով, լուծողականով, և այնով յօգնեցնելու: Ծիծ տալը որոշ ժամանակներում պէտք է լինի. Երեխայի ամեն մի ճիշճին, անկանոն և անշափ կերպով ծիծ տալը ստամորսի խանդարումներ, կանանչ լուծմունքներ և փորացաւեր է առաջացնում. Երկրորդ և երրորդ շաբաթից սկսած երեխային ծիծ պէտք է տալ 2 ժամը մի անդամ, իսկ զիշերները 2 կամ 3 անդամ: Երրորդ ամսից սկսած 3 ժամը մի անդամ, իսկ զիշերները միայն մի անդամ: Երբ որ երեխան կանոնաւոր և առողջ է, կաթը հեշտութեամբ է գալիս. ծիծ տալու տեսպութիւնը 10 կամ 12 րոպէից արելի լինելու չէ, որովհետեւ, աւելորդ և անօգուտ ծծումները ծիծ ճամթուուք և ուռոյցներ են պատճառում: Երեխան մի անդամից ծծած կաթը մինչև 2 ժամում մարսում է, հետեւաբար երեխայի ստամօրսը պարապ թողնել աւելորդ է: Այս կարգագրութիւնից երբեմն շեղուել կարելի է, երբ որ երեխան քնում է չը պէտք է զարթնեցնել, կանոնաւորութիւնը պատրաստակ համարելով:

Վեցերորդ ամսում ծիծ տալը մի անգամ պակասեցնելով նրա փոխարէն կարելի է տալ կաթով և ալիւրով պատրաստուած խիւս, և եթէ այսպէս կարգադրուի, երեխան զիշերը բնաւ չի զարթնուր: Մինչեւ երեխային խիւս տալ սկսելը օրական առնուազն 7 անգամ ծիծ տալու է և երկու ծիծ տալու միջոցը 3 ժամը անցկենալու չէ:

Հետեւալ ցուցակը սրոշ կերպով ցոյց է տալիս երեխայի ծծած կաթի քանակութիւնը տարիքի համեմատ:

ՕՐ Ի ԱՄԽՍ	ՕՐԱԿԱՆ ՔԱՆՔ ԱՆԳԱՄ ԾԻԾ ՏԱԼ	ՍԻ ԱՆԳԱՄԻՑ		24 ԺԱՄՈՒՄ ԾՐ- ԾԾԱԾ ԿԱԹԸ	
		ԳՐԱՄ	ՄԱԽԱԼ	ԳՐԱՄ	ՄԱԽԱԼ
Առաջին օր	1 կամ 3	5	1,17	15	3,51
Երկրորդ օր	10	10	2,34	100	23,40
Երրորդ օր	10	15	3,51	150	35,10
2որրորդ օր	10	20	4,68	200	46,80
Հինգերորդ օր	10	25	5,85	250	58,50
Վեցերորդ օր	10	30	7,02	300	70,20
Մինչեւ մի ամիս	10	60	14,04	600	140,40
Երկրորդ ամիս	9	70	16,38	630	147,42
Երրորդ ամիս	8	90		700	163,80
2որրորդ ամիս	7	100		750	175,50
Հինգերորդ ամ.	7	110		800	187,20
Վեցերորդ ամ.	7	120		850	198,90
Վեցերորդից յի- տոյ	6	150		1000	234,00

Առաջին մանկութեան, մանտաւնդ առաջին տարւայ մէջ հասակի և ծանրութեան կողմից երեխան աւելի արագ է աճում և զարգանում: Բայց պէտք է աւելացնել, որ երեխայի

աճումին և զարգացումին վրայ ազդում է նաև մօրը առողջ վիճակը և մնունգը: Ծիծ տուող մայրը հանդարտ կեանք, լաւ մնունգ, լաւ մարսողութիւն և երկար քուն ունենալու է, հակառակ գէպրում կաթի յատկութիւնը փոխելով երեխան վնասում է: Մայրը պէտք է զգուշանայ բարոյական սաստիկ յուզումներ պատճառսդ բաներից, ինչպէս, բարկութիւններ, վախ, չափազանց ուրախութիւններ, պարահանդէսներ, թատերախաղներ, երեկոյթներ, վէպեր և երկար ընթերցումներ: Եթէ մարսողութիւնը լաւ է, կարող է ուտել ամեն մնունգ, միս, բանջարեղին, պտուղ, հայն, ոսպէ ապուրը կաթը շատցնելու յատկութիւնը ունի: Մնունդները ազդում են նաև կաթի յատկութեան վրայ, հետեւբար ծծմայրերը չը պէտք է ուտեն, սոխ, սխտոր, համեմանքներ, հայն:

Հետեւալ ցուցակը ցոյց է տալիս հասակի, ծանրութեան և կաթի համեմատական չափերը:

Թվական	Միջին ծանրութիւն		Եանդամեթեան աճումը				Կաթիւ շափու		
	Քիո	Մսխալ	Անական	Գրամ	Մսխալ	Գրամ	Մսխալ	Գրամ	
մտյավազոս մրտչոտ զարկ տորոտ վկառուշ									
1	3,250	760,5	—	25	5,85	600	140,40	53	4
2	4,000	936,0	750	175,50	5,85	650	153,10	56	3
3	4,750	1111,5	750	175,50	25	5,85	600	140,40	—
4	5,450	1275,3	700	163,80	23	5,38	700	163,80	58
5	6,100	1427,4	650	153,10	22	5,15	750	175,50	60
6	6,700	1567,8	600	140,40	20	4,68	800	187,20	62
7	7,250	1696,5	550	128,70	18	4,21	850	198,90	63
8	7,750	1813,5	500	117,00	17	3,98	900	210,60	64
9	8,200	1918,8	450	105,30	15	3,51	950	222,30	65
10	8,600	2012,4	400	93,60	13	3,04	950	222,30	66
11	8,950	2094,3	350	81,90	12	2,80	1000	234,00	67
12	9,250	2164,5	300	70,20	10	2,34	1000	234,00	67,5
	9,500	2223,0	250	58,50	8	1,88	1000	234,00	68

Երեխան ծնւած ժամանակ 3250 գրամ, այսինքն 760 մսխալ է կշռում միջին կերպով, որովհետև աղջիկները կշռում են 3000 գրամ (702 մսխալ) իսկ տղաները 3500 գրամ (819 մսխալ). Ինչպէս այս ցուցակից նկատում է, երեխան մէկ տարեկան եղած ժամանակ նրա ծանրութիւնը եռապատկւում է և հասակը 20 սահտիմէտր աւելանում: Այս թւանշանները ի հարկէ բոլորովին բացարձակ չեն կարող լինել, բայց միջին թիւեր լինելով, գրանց հետ կարելի է համեմատել երեխայի աճումը և զարգացումը, և նրա համեմատ ինանալ թէ երեխան առողջ է, բնական կերպով աճում և զարգանում է: Ուրեմն, մայրը միշտ պէտք է կշռէ երեխային և չափէ հասակը, իմանալու համար թէ ճշտութեամբ կարողանում է կատարել մայրական նուիրական պարտականութիւնը:

Բ.

ՍՏՆՏՈՒԹՎ ԳԻԵՅՑՈՒՄ.—Մայրը իր երեխային ծիծ տալու անկարող եղած ժամանակ, երեխային կերպելու ամենայարմար միջոցը սահտուն է: Ծծմօր հիւանդութիւնները խորին կերպով ներզործում են կաթի յատկութեան վրայ և երեխային վնասում: Ընդհանուր վարակումի հետևանքը եղող տենդային հիւանդութիւնները, խոյլը, թորախողը, արեան պակասութիւնը, լուսնոտութիւնները, երկու ծծերի միաժամանակ թարախոտիլը ծիծ տալու մեծ արգելքներ են: Նոյնպէս զանազան գեղեր, օրինակ մինզեզը (arsenic), կաթի միջոցով անցնելով երեխային վնասում են: Հետևաբար այս կարգի մայրեր իրենց երեխաներին ծիծ չեն կարող տալ: Սակայն սիֆիլիս ունեցող մի մայր պարտաւոր է իր երեխային ինքը ծիծ տալ:

Սահնտուն հետեւալ յատկութիւնները ունենալու է.—

դաշտարնակ, համակրելի 20-ից 30 տարիք, անդաշտան, կանխաւ ծիծ տւած, թխամորթ, քաջառողջ, առանց վերային սպիտերի, շափաւոր մեծութեամբ ստինգներ, գուրս ցցուած և կակուզ պտուկ, կաթը առատ և 2-ից 6 ամսական, արտարին լաւ տեսր, . սպիտակ ատամներ: Բայց այս արտարին հանգամանքները բաւական չեն ստնտուին լաւութիւնը իմանալու. կարող է այս բոլոր հանգամանքները ունենալով հանդերձ թաքուն հիւանդութիւնների ենթակայ եղած լինել, օրինակ, սիֆիլիս, թոքախտ, խոյլ (scrofule, խանազղիր), հայլն. ուրեմն ստնտուի ընտրութեան ժամանակ լաւ է բժիշկի խորհրդին դիմել:

Ստնտուներին փոխելը երեխայի համար լաւ չէ. եթէ երկրորդը առաջնի վրայ շատ մեծ առաւելութիւններ ունի, կարելի է երեխան նրան յանհճնել և առաջնին ճանապարհ գցել:

Ստնտուն իր ապրելու կերպը յանկարծապէս փոփոխելու չէ. միս թիշ ուտելու և սուրճ ու թէյ թիշ խմելու է. իսկ ալկոլ պարունակող խմիչքներ բնաւ գործածելու չէ: Տնեցիք միշտ պէտք է հսկեն ստնտուների վրայ, որովհետեւ շատ անգամ նրանք անհոգութեամբ երեխանների հիւանդանալուն և մահւան պատճառ են զաւում: Եթէ լուրջ հսկողութիւն կատարել հնարաւոր չը լինի, այն ժամանակ տևելի լաւ է արհեստական դիեցման դիմել:

Գ.

ԱՐՑԵՍՏԱԿԱՆ ԴԻԵՑՈՒՄ.—Երեխաններին տրւելու ամենայարմար կաթը իշու, այծի և կովի կաթն է: Սրանցից իշու կաթը թեթև և կիոջ կաթին շատ է նման: Նոյնպէս են այծի և կովի կաթը, միայն այն տարբերութեամբ, որ այծի կաթին կաթնաշաքարը մի լիդրին (234 մսխալ) է անում, մեր

գրբում յիշւած լիտրները միշտ պէտք է ընդունել 234 մլուխալ) 20 գրամ (4,68 մսխալ) պակաս է, իսկ բնապանիրը (պանիրային մաս) 15 գրամ (3,51 մսխալ) աւելի, իսկ կովի կաթի կաթնաշաքարը 3 գրամ (0,70 մսխալ) պակաս և բնապանիրը 13 գրամ (3 մսխալ) աւելի է, որով կաթը ծանրանում է, հետեաբար առանց շաքար և ջուր աւելացնելու մինչև 6 ամսական երեխաններին չէ կարելի տալ:

Հետեաբար ամենալաւ միջոցը երեխային ուղղակի իշու ծծի պտուխներից ծծել տալն է, մանաւանդ երբոր երեխան սիֆիլիսոտէ. որովհետեւ սիֆիլիսոտ երեխային ստնտուով դիեցնել չէ կարելի, ստնտուն կարող է վարակւել երեխայի սիֆիլիսով:

Ուրեմն, մինչև ելփու երեք ամսական երեխաններին կարելի է տալ իշու զուտ կաթ, յետոյ մինչև վեց ամսականը այծի զուտ կաթ, և վեց ամսից յետոյ կովի զուտ կաթ, ուղղակի պտուխներից ծծել տալով:

Իսկ եթէ ուղղակի պտուխներից ծծել տալը յարմար չը լինի, հարկաւոր է կաթը ծծակով (biberon) տալ, բայց պէտք է զիտնալ, որ ծծակով մեծացող երեխանների մէջ մեռնողների թիւը՝ ծծով մեծացողներից 6 կամ 7 անգամ աւելի է լինում: Դգալով էլ կարելի է տալ, բայց ծծակով տալը աւելի է յարմար, որովհետեւ երեխան ծծումներ կատարելու պատճառով կաթը աստիճանաբար կը մարսէ:

Այծի և կովի կաթին ջուր և շաքար պէտք է աւելացնել, իսկ իշու կաթին ոչ: Պատճառը թիշ վերեսում բացարեցինք: Հետեաբալ բաղդատական ցուցակը ցոյց է ապիս կիոջ, իշու, այծի և կովի կաթների պարունակած նիւթերի համեմատական շափերը:

Քննուած նիւթեր	Կնոջ կաթ		Կշու կաթ		Այծի կաթ		Կովի կաթ	
	գրամ	մո.	գրամ	մո.	գրամ	մո.	գրամ	մո.
Կաթնաշաքար	62,3	14,6	50,22	11,75	42,40	9,92	59,4	13,9
Կարագ	39,4	9,2	36,65	8,57	40,04	9,36	38,2	8,8
Բնապանիր և բը,								
Նասպիտ	22,6	5,3	22,80	5,33	37,00	8,65	25,5	8,3
Հարաբակ աղ	1,1	0,25	2,61	0,60	1,62	0,37	2,5	0,6
Ռոբիչ աղեր	3,4	0,80	4,27	0,95	3,48	0,81	6,0	1,4

Այծի և կովի կաթին խառնուած ջուրի և շաքարի շափը հետեւալ համեմատութեամբ լինելու է. նախ մի պէտք ջուրին (234 մսխալ) պէտք աւելացնել 50 գրամ (11,7 մսխալ) շաքար կամ աւելի լաւ կաթնաշաքար, որը գեղատերից հեշտ կարելի է ձեռք բերել՝ յետոյ այս շաքարաջրից 3 մաս առնելով 1 մաս կաթի հետ պէտք է խառնել, առաջին շաքաթների համար, և երեխայի մեծանալուն համեմատ այս շաքարաջրի շափը պէտք է պակասեցնել, հետեւալ ցուցակի համաձայն: Խոկ վեցերորդ ամսից սկսած զուտ կաթ պէտք է տալ:

Տարիք	Կաթ	Ջորարաջուր
Առաջին շաքաթ	1 մաս	3 մաս
Մինչեւ մէկ ամսական	1 մաս	2 մաս
Երկրորդ ամիս	1 մաս	1 մաս
Երրորդ և չորրորդ ամիս	2 մաս	1 մաս
Հինգերորդ ամիս	3 մաս	1 մաս

Կաթ տալու ժամերը և շաքերը նոյնը պէտք է լինին, ինչ որ խոսեցինք մայրական պիեցման համար: Ֆծակը պարզ

տեսակից պէտք է լինի, առանց ապակեայ և բէզինէ խողովակների, միայն բէզինէ մի պտուկ ունենալու է: Կաթը լիցնելուց առաջ ծծակը և պտուկը եռացրած տաք ջրով լուանալու է: Կաթի կամ շաքարաջուր խառնուած կաթի տարութիւնը 37 սանտիմետր աստիճան լինելու է. շաքարաջուրը լաւ եռացրած ջրով պէտք է պատրաստել:

Երեխաներին տրւած կաթը միշտ չեղոքացրած պէտք է լինի, այս միջոցով կաթի մէջ զտնւած միկրոֆիլերը փանում և երեխային պաշտպանում են թոքախտի, տիֆի, թորային բորբոքումի դէմ. մանաւանդ լաւ չեղոքացրած կաթը երեխաների լուծմունիքն է դարմանում:

Կաթը չեղոքացնելու համար այսպէս պէտք է անել: Երեխային հարկաւոր եղած կաթը, կանխաւ եռացրած ջուրի մէջ լուացրւած բուտիլկայի մէջ զնելով բերանը դեղատան մաքուր բամբակով ծածկելու է: Կաթը բուտիլկայի բերանից երկու երեք մատ ցած պէտք է լցնել: Յետոյ, այսպէս պատրաստած բուտիլկան, վրան գոց և ջրով լիք մի ամանի մէջ զնելով երեք քառորդ ժամ եռացնելու է: Յուտիլկայի բերանը ջրից երկու երեք մատ բարձր կանգնելու է: Յետոյ բուտիլկան ջրից հանելով հասարակ սառ ջրի մէջ պէտք է զնել: Եթէ այսպէս չեղոքացրած կաթը միւս օրուայ համար պահել հարկ լինի, այն ժամանակ բուտիլկայի բերանի բամբակը հանելով, երա տեղ մի մաքուր խոց զնելով է:

Տներում առանց մասնաւոր գործիքների այսպէս շատ հասարակ կերպով և հեշտութեամբ կարելի է կաթը չեղոքացնել: Եյս բանին ծառայող մասնաւոր գործիքներ էլ կան, որոնք այնքան թանկ չեն. օրինակ, Թօրէրի մօղէլլ (stérilisateur pour le lait, modèle Robert) կարելի է ձեռք ձգել, բացի ճանապարհածախսից, 4 ֆրանկ 25 սանտիմով (1 բուրդ 60 կողեւկ կամ 9 զոան 50 կողեւկ), որը ունի 175 գրամ (31 մսխալ) նշանակւած աստիճաններով 4 բուտիլկայ, կա-

ուտշուկից 4 խից, ծծակի տեղ ծառայող 1 պտուկ, մար-
րելու 1 վրձին, եռացնելու մի աման: Դոկտ. Բիստինի մօ-
տէլը (du Dr. Budin) աւելի հաստատուն է և ունի 9 բու-
դիլկայ, որը արժէ 8 ֆրանկ 50 սանտիմ, միւսի կրկին ար-
ժէքը: Գործարանի հասցէն է (Messiers Ö. Huclin et Cie,
Paris, 43 et 60 rue du Roi-de-Sicile (France).

Երեխաներին մանաւանդ շատ փորբերին արհեստական
կաթեր, ինչպէս խտացրած կաթ, կաթնալիւր (ֆարլին լակտէ),
և այլն տալը պարզապէս ոճրագործութիւն է, եթէ տղիտու-
թիւնը չըմեղանը չի համարւի: Այս տեսակ կաթերով և ա-
լիւրներով մեծացող երեխաները թէի սկիզբներում աճում են,
բայց յետոյ խկայն վնասուում են, փորերնին մեծանում, ուռ-
չում է և շատերը մեռնում են:

Երեխայի աճումը և զարգացումը սննդառութեան այս
տարբեր եղանակների համեմատ մեծ տարբերութիւն է ցոյց
տալիս: Բժիշկները երկար փորձերով հաստատել են, որ երե-
խայի կշռքը մնունդի զանազան տեսակների համեմատ հետ-
եւալ կերպով է աւելանում:

ծիծով մեծացած երեխան օրական	7, 2 գրամ (1, 68 մսխալ):
Կովի կաթով »	» 2 գրամ (0, 46 մսխալ):
Խտացրած »	» I գրամ (0, 23 մսխալ):
Փարին լէկաէով »	» ^{1/2} գրամ (0, 12 մսխալ):

ԽԵՌՆ ԴԻԵՑՈՒՄ.—Խառն զիեցումը միննոյն ժամանակ
թէ քնական և թէ արհեստական կերպով երեխային կաթ
տալ է նշանակում: Այն մայրերը, որոնց կաթերը բիչ են,
ստիպուած են լինում արհեստական դիեցման դիմել, օրինակ,
ցերեկները իրենք ծիծ են տալիս, իսկ զիշերները կենդանիների
կաթ. իսկ ընդհակառակը, դաշտում աշխատող կանաքը ստիպ-
ուած են ցերեկները կենդանիների կաթ տալ: Իսկ զիշերները
իրենց ծիծերը:

Պ.

ԵՐԵԽԱՆ ԾՖԻՑ ԿՑՐԵԼ.—Երեխան ծծից կտրելու համար
պէտք է նախապատրաստութիւններ տեսնել. Երեխան երբոր
ուտում և միննոյն ժամանակ կաթ է ծծում, առանց նեղու-
թեան և աւելի հեշտութեամբ է ծծից կտրուում: Սրա համար
երեխային կանուխից պէտք է վարժեցնել անվնաս ուտելիքի,
միննոյն ժամանակ կաթի ժամերը պակսեցնելով: Յանկարծա-
կի և միանդամից ծծից կտրելը վնասակար է:

Վեցեկորդ կամ ութերորդ ամսում, երբոր առաջին ատամները
երեալ են սկսում, պէտքէ օրական մի խիւս տալ: Այս արգէն ծծից
կտրելու առաջին քայլն է, ատամնաւորութեան միջացում այսպէս
շարունակելով, ապուրներ ևս պէտքէ աւելացնել: Քանի անգամ
որ ուտելիքները աւելացնենք, այնքան անգամ կաթ տալը պէտք է
պակսացնել. այս ուտելիքները ծծի և կաթի տեղն են բռնելու:

Այսպէս երեխան աստիճանաբար ուտելիքների է վար-
ժուում: Առաջին տարւայ վերջերումը երկու ապուրների հետ
մի անգամ էլ մսաջուր պէտքէ տալ, քիչ յետոյ մսաջուրի մէջ
կէս և աւելի յետոյ մի ամբողջ ձուի զեղնուց աւելացնելու է:
Վերջապէս, դէպի 15-րդ ամսականը, որ երեխան 12 կամ
15 ատամ է ունենում, կարող է ուտել, միշտ կաթի հետ զու-
գընթացարար, մի քիչ ծեծած միս և մի քանի պատառ հաց:
Դալով կանանչեղին կերակուրներին, բացի ալիւրայիններից,
միւսները զեռ չըպէտք տալ. ուրեմն չը տալ ոչ կանաչե-
ղիններ և ոչ պտուղներ, որոնք կարող են մարսողական
խանգարումներ և նեարդացնցումներ առաջացնել: Այս կերպով
ծծից կտրելու վերջնական սահմանին ենք հասնում:

ՎԵՐՃՆԱԿԱՆ ԾՊԵԼ ԾՖԻՑ ԿՑՐԵԼ.—Այս բանը յաճախ
մայրերը իրենց ունեցած անսահման գորովի պատճառով
ուշացնում են և կամ ստնտուները իրենց ապահով վիճակը
չի կորցնելու համար ծծից կտրելը յետաձգում են: Ծծից

կտրելը անպայման անվտանգ անցնելու համար բժիշկը պէտք է վճռէ, և այն էլ, ոչ թէ, երեխալի տարիքը նկատի ունենալով, այլ նրա զարգացումը, առողջ վիճակը և ատամնաւորութեան ընթացքը։ Ամենայարձար ժամանակը շնատամների երեւմից յետոյ կամ թիշ առաջ եղած միջոցն է, այսինքն, 15 և 18 ամիսների միջի։ Յարմար եղանակը զարուն և ձմեռն է։ Ամառը նպաստաւոր չէ, որովհետեւ աւելի հեշտ լուծմունք է պատճառում։

Ծծից կտրելը վճռուած օրը երեխան ծծմայրից պէտք է բաժանել և փստահելի մէկին յանձնել, որը գիշերը նրա զարթնած ժանանակ կովի չէզպացցրած կող կաթ կտայ, յետոյ եթէ նորից զարթնէ, մի թիշ շաբարաջուր, յետոյ պարզ ջուր և յետոյ ոչինչ, յաճախ երեխան մինչի առաւոտ քուն է լինում։ Եսոսիս մի շաբաթի շափ օրական 2 և կամ 3 անգամ ծիծ տալով և անզգուշաբար նրանց տեղը կաթ կամ ապուր տալով և պտուկների վրայ օխնաքինայի նման լեղի մի բան բուելով, երեխան ծծից կը զգի։

ԾծիՑ ԱՍՏԻՃՆԵԲԱՐ ԿՏՐԵԼՈՒ ԵԹԱԽԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ, Մի տարեկանից առաջ կտատրւած կանխահաս ծծից կրտսելը երեխային կը պատճառէ ոսկորների թուլութիւն (rachitiswe) և մահ։ Խոկ ուշացրուած ծծից կտրելը աւշային թրյլ կազմ և աճեցումի դադարում է պատճառում։ Երբեմն երեխան կաթից զգում է, այն ժամանակ նրա հետ խառնելու է երեխից խոյը վերցրած մոռաջուրն իւզոտ ուտիլիքները ծծից կտրելու ժամանակ և կամ թիշ յետոյ երկու անպատեհութիւններ ունին։ Նրանք ստամոքսի խանգարում են առաջնում և շուտով յագուրդ տալիս։ Ուրեմն, միաը նախ տալու է առանց իւզի, օրուայ մէջ մի անգամ և շաբաթական միայն 2 կամ 3 անգամ, այն էլ փոքր չափով։ Մոխ բույր կարծր մասերը՝ կաշի, իւզ, և այն հանելով ճմլելու է։

Զու տալը շաբանակելու է, և եթէ երեխան սիրում է,

ձուկ և կարելի է տալ, փոփոխակի մի օր ձու, մի օր ձուտ, մի օր փորը կօտլէտներ կամ խորսված միս տալու է։

Ճատ անդամ ծծից կտրելու այսպէս կանոնաւոր հոգտծութեամբ հետեւելով հանդերձ, երեխան մարսողական խանգարումների է ենթարկում, մի կողմից ատամների մասեակի պակասութեան, հետեաբար ծամելու անկանոնութեան և միւս կողմից ուտելու սովորութեան դեռ չը վարժւած լինելու պատճառով։ Արդ, երբ որ լուծմունքները երկար ժամանակ շարունակին, խոհեմութիւն է նախնական թեթի սնունդներին վերադառնալ մանաւանդ կաթը ամենայարձար է։ Եթէ երեխան նիհարանայ, լուծմունքը շատանայ և կերածը չի մարտէ, նոյնիսկ նորից ծիծ տալ սկսելու է։

Ծծից բոլորովին կտրւած երեխային տոնեուազն օրական չորս անգամ պէտք է կերակրել։

ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱՃԱՃԱՃ. — Առաւոտ զարթնելուն, ժամը դէպի 7—8, տալու է երեխայի ախորժած սիրած և վարժւած խիւսերից մէկը, և եթէ ծարաւ է, մի փոքր բաժակ կաթ։ ԵՐԿՐՈՐԴ ՆԱԽԱՃԱՃԱՃ. — Ժամը 11-ին կամ կէսօրին տալու է մի ապուր կամ մոռաջուր, հացով կամ ալիւրային մի բանով։ Կանանչեղիներով պատրաստուած ապուրների միայն հեղուկ մասը կարելի է տալ։ Բացի այդ, մի քիշ միս կամ ձուկ, կամ մի ձու կամ մի թիշ սեր ևս տալու է։ Երբեք խմելիք, կաթ կամ մարտը ջուր պէտք է տալ։

ՃԱՃԱՃ. — Ժամը 3 կամ 4-ին պէտք է տալ կաթ, որի մէջ թաթախելու է մի բիսկիւտ կտա հայ։

ՔՆԹԹՐԻՑ. — Ժամը 6 կամ 7-ին տալու է մի լաւ ապուր, իւզալի կամ առանց իւզի, և կաթից ուրիշ ոչինչ տալ եթէ երեխան ծարաւ է։

Ե.

ԵՐԿՈՒՆՔԻՑ ՄԻՆՉԵՒ 7 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄՆՈՒՆՔԸ.—Եյս շրջանում, այսինքն առժամանակեայ և մնայուն ատամներ հանելու միջե եղած ժամանակամիջոցին, որքան որ մարսողական գործարանը աւելի ոյժ և տոկունութիւն ունի, բայց չէ կարող ամեն բան մարսել, մանաւանդ սկզբներում։ Անօթութիւնը և վերանորոգման կարիքը այս տարիքում, ինչպէս առաջին տարիներում, շատ է զգալի դառնում և երեխան սնունդի գրկումից շուտով է վնասում։ Հետեւեալ ցուցակը ցոյց է տալիս այս 7 տարիներում երեխայի զարգացումը կշիռի և հասակի կողմից։

Ժքան	Ծանրութիւն				Հասակ	
	աւելացում		աւելացում			
	տարեկան	գումար	տարեկ.	գումար		
	գրամ	մսխալ	գրամ	մսխալ	միլիմէտ.	անհամ.
Ենունդ	—	—	3250	760,5	—	50
1 տարի	6250	1462,5	9500	2223,0	198	69
2 տարի	1840	430,5	11340	2653,5	90	78
3 տարի	1130	264,4	12470	2917,9	73	86
4 տարի	1740	407,1	14210	2325,0	65	92
5 տարի	1540	350,3	15750	2675,3	65	99
6 տարի	1470	343,9	17220	3019,2	50	104
7 տարի	1860	435,2	19080	3454,4	50	109

ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ.—Բուսական թթուներից և շաբարից զգոյշ պէտք լինել, որոնց շափազանց գործածութիւնը վնաս է պատճառում։ Առողջ ժամանակ իւզոտ սնունդներից շափազանց տալու չէ. ձկան իւզն էլ բժշկի խորհրդով պէտք տալ, իդուր ստամոքսը անհանդիստ կըլինի։

ՄՄԻ ԶԱՓԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ.—Եյս տարիքում պէտք տալ կակուղ միսերից. հակառակ գէպրում, երեխան բաղցածութեան պատճառով առանց բաւականաչափ ծամելու կուլ է տալիս, որով ստամոքսի յովնածութիւն և լուծմունքներ են առաջանում, այս լուծմունքների մէջ կարելի է տեսնել չը մարսուած մսի կտորներ։ Մեր նշանակած ձուկերը փափուկ միս ունենալով հեշտամարս են։ Եյս երկրորդ մանկութեան մէջ միսից օրական մի անգամ և այն էլ կէսօրուայ ճաշերին պէտք է տալ, և ոչ թէ ճաշի կամ ընթրիքի ժամանակ, ինչպէս սովորաբար անում են։ Քաղաքացիների և հարուստների երեխաները միս շատ են ուտում, այս կարգի երեխաների մարմինը թէկ լիք և արտաքին երեխյթը գեղեցիկ է, բայց լիզուն ապտոտ, շոնչը դարշանոտ, զուրս զնալը անկանոն և հոտած, ստամոքսային և աղլիքային խանգարումները յաճախապէպ, մորթային հիւանդութիւնները սովորական և կիսազլացաւերը վաղաճաս են լինում. յօդացաւը իր զանազան երեխյթներով շուտ վրայ է համեստ և վտանգաւոր դառնում, և երեխաները հէնց իրենց առաջին տարիներում գիրանալու տրամադիր են լինում։

ԿԱՆԱՆՑԵՐԵԿԱՆՆԵՐ.—Եյս տարիքում կանանչեղինները ճմլած պէտք տալ: Ոլոռնը (ροΐς), լրիան, ոսպը, բրինձը, գետնախնձորը, և այլն, սրանչելի ճմլածներ են տալիս, սրբանք կարող են նաև ծառայել ապուրներ պատրաստելու, որոնք խիւսերից աւելի սննդաբար և գերադասելի են:

Կանանչ թարմ բուսեղինները, թէկ վերոյիշածներից նուազ սննդաբար են, բայց լաւ եփած վիճակի մէջ օգտակար են։ Սրմանները՝ ստեպին, շողզամ, և այլն, այս տարիքի երեխաներին անյարմար են, նրանց ստամոքսը տանել չէ կարողանում։ Զուն և կաթը յարմար ուտելիքներ են, պայմանով, որ զանազան արհեստական միջոցներով առանց ձևափոխելու, պարզ վիճակի մէջ տրուին։

ԽՄՈՐԵՎՀԵՆՆԵՐ.—Այս տարիքում խմորեղինները անմարսկի են, նրանց պէտք է տալ միայն թարմ կարագ քւած և շարարի փոշի ցանւած մի քիչ լաւ հաց կամ չոր բիւսկիւտ:

Մեր խօսքը ամփոփելով ասում ենք, որ այս տարիքի երեխաններին միայն պէտք է տալ մի քիչ միտ և ձուկ, սպիտակ լաւ հաց, լաւ եփած կանանչեղին, կարելի եղածին չափ նրանց կեղևները հանելով և աւելի լաւ է, նրանց ապուրները կամ ճմլածները: Չը պէտք է տալ կարմիր կարծր միտեր, ինչպէս խոզի և հինացած ու եփած որսի միտ, տաք հաց, որ անմարսկի է, կամ սև հաց, որ թթու է, կարծր կեղևներով թարմ պտուղներ, անեփ կանանչեղիններ, ինչպէս բողկ, սոլագ, և այլն ոռնկ, թալլ, կաղամբ, ստեղլին, շողգամ, վերջապէս խմորեղիններ և քաղցրէղիններ, զրգուիչ ըմպելիներ, քացախ և համեմանիք:

Այս տարիքի երեխանները չորս զիսաւոր ճաշեր ունենալու են:

ԱԹԱԶԻՆ ՆԱԽԱԶԱԾՔԸ.—Առաւտ կանուխ մի ապուր պէտք տալ: Ստամպուր չի տալուկացնելու համար կարելի է երրեմն փոփոխութիւններ անել, օրինակ ալիւրոտ, ոսլայոտ բաներ ընտրել: Կաթով սուրճը յարմար է, մանաւանդ քաղաքի երեխաններին, որոնք միշտ փակւած են ապրում, կաթով սուրճի հետ կարելի է տալ հաց և կարագ: Յօկօլադը կամ կական երրեմն ապուրից աւելի հաճելի են զալիս: Վերջապէս առաջին նախաճաշին սրանցից պէտք է ընտրել և փոխի փոխ տալ:

ԵՐԿՐՈՐԴ ՆԱԽԱԶԱԾՔԸ.—Կէսօրւայ ճաշը առատ և ճոխ պէտք լինի: Բաղկանալու է միսից, կանանչեղինից և պտուղից: Փոփոխութիւն տալու համար երրեմն միսին փոխարիններու է ձուկը և կանանչեղինին ձուն: Կերակուրների մէջ պէտք է ընտրել մննդարար և միհնոյն ժամանակ աւելի հեշտամարսը: Գերազանելի են ուզեղը, հորթի մէջամասը, ճուտը, խորոշած և կասկառած միսը: Ապուրին փոխարիններու է գետ-

նախնձորի, ալիւրոտ բուսեղինի, բրինձի, և այլն, ճմլածով: Աւելի ուշ, կարելի է տալ միսով միասին լաւ եփած կանանչեղիններ: Պտուղները խաչած կամ կօմպօտ կարելի է տալ, ինչպէս նաև սեր, բիւսկիւտ, և ալին:

ՃԱԾՔԸ.—Մի բաժակ կալչ և մի քիչ հաց այս տարիքին ամենալաւ ճաշն է: Կաթից զգւող երեխանները չօկօլտառով կամ անուշեղինով հացը ախորժով պիտի ուտեն:

ՀՆԹՐԻՔՔԸ:—Մինչի 6 կամ 7 տարեկան մանուկները կարելի եղածին չափ պարզ, բայց միենոյն ժամանակ մննդարար լնթրիք ունենալու են: Հնթրիքին միս տալու չէ, նրա հիմք ապուր պէտք լինի: Ապուրից յետոյ, երեխայի մեծանալուն համեմատ տալու է մի ճու կամ ճուից և կաթից պատրաստած մի ուտելիք:

¶

ԵԶԹԻՑ 15 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆՆԵՐԻ ՍՆՈՒՆԴՔԸ:—Այս տարիքի երեխանները հասակի և կշռարի կողմից հետեւել ցուցակի համեմատ են զարգանում: Կերակուրները պարզ և փոփոխական պէտք լինին:

Ժըշան	Թ ա ն բ ու թ ի ւ ն			Հասակ		
	աւելացնում		աւելացում			
	տարեկան	գումար	տարեկան	գումար	մէտր	
8 տարի	1860	435,2	20,740	4853,1	0,055	1,116
9 »	1890	442,4	22,630	5295,5	0,050	1,116
10 »	1870	437,5	24,500	5733,0	0,052	1,218
11 »	2580	603,7	27,080	6336,7	0,050	1,268
12 »	2720	636,4	29,800	6973,1	0,050	1,318
13 »	4560	1067,0	34,360	8040,1	0,052	1,370
14 »	4290	1003,8	38,650	9043,9	0,044	1,414
15 »	4950	1158,3	43,600	10,202,2	0,041	1,455

Այս տարիքում երեխան նոյնպէս չորս անգամ պէտք է ճաշէ:

ԱԹԱԶԻՆ ՆԱԽՆԱՃԱՃԲ.—Առաւօտ՝ բարձր ուսումնարաններում ապօրի և կաթով սուրծի փոխարէն տալիս են մի մեծ կտոր հաց կարագով, պանիրով, անուշեղինով կամ պտուղով միասին, սրանցից որն որ էլ լինի, յարմար է, միայն մէկը պէտք է ընտրել և երբեմն փոփոխութիւններ տալ: Գիշերօթիկները իրենց համար առանձին պահեստի շոկրատ ունեն, որ եթէ լաւ տեսակից է, որեէ անպատճութիւն չէ ներկայացնում, այս անհրաժեշտ է մանաւանդ նրանց համար, որոնք կանուխ են զարթնում:

ԵՐԿՐՈՐԴ ՆԱԽՆԱՃԱՃԲ.—Ուսումնարան յաճախող երեխանների այս նախաճաշը ճոխ պէտք է լինի, որոնք մեծանում և մեծ ոյժ են սպառում: Այս նախաճաշի հիմքը պէտք է կաղմէ մի պիտակ միտ, կանանչեղին, պանիր, կօմպոտ, լաւ հասունացած կամ եփած պտուղներ:

ՃԱՃԲ.—Մի քիչ հաց և նրա հետ ձեր ցանկացած յարմար մի ուտելիք բաւական է: Մեծ քաղաքներում այս տարիքի երեխանները կէս օրին գալոցից գուրս գալով ընդհանրապէս կարկանդակամանների մօտ են զնում, մանաւանդ օրիորդները և այնտեղ ստանում են ստամոքսի ցաւ և անմարսութիւն:

ՀՆԹՐԻՔԲ.—Անքան ճոխ լինելու չէ. երկրորդ նախաճաշի նման միտ կամ ձու պէտք է ուտեն: Թարմ կամ չոր կանանչեղինները, պտուղները և անուշեղինները յարմար են:

ՉՈՐՏՈՐԴԻ ՄԱՍ

ՎԵՇԵՌՈՂ ԵՐԵԽՆԵՐԻ ՄՆԱԽՆԻՔ

Ա.

Երեխանների մնուղը, իրենց կշոքի համեմատած, միշտ չափահաններից աւելի է. չափահանների համար հարկաւոր է իրենց մի քիլօ (234 մսխալ) ծանութեան համեմատ օրական 3, 60 գրամ (0, 84 մսխալ) ածխածին և 0, 20 գրամ (0, 04 մսխալ) բորակածին. մինչդեռ երեխանների համար հարկաւոր է 8 գրամ (1, 87 մսխալ) ածխածին և 0, 50 գրամ (0, 11 մսխալ) բորակածին: Որովհետեւ, երեխան ոչ թէ միայն իր առօրեայ կորուսածը մնունդով է փոխարինում, այլի նրա մի մասը իր մարմինի մէջ պահեստի է զնում, իր աճեցման և զարգացման համար:

Յաճախ երեխայի աճումը և զարգացումը անկանոն և վրդովալի է լինում, արագանում կամ ուչանում է, չափազանցում կամ անհաւասար կերպով է տեղի ունենում:

Վատ մնունդը ուսկորների թուլութիւն առաջնելով նօրմալ պայմանների մէջ մարմինի զարգացումն է արգելում: Յայտնի է, որ այս հիւանդութիւնը յաճախ առաջին կամ երկրորդ տարւայ մէջ է, սկսում, որոնք կազմում են երեխայի աճեցման ամենազործն շրջաններն: Այս հիւանդութիւնը ընական աճումն է ուշացնում և ասզրի ու սրունքի ոսկորները տկարացնում, որով հասակը անփոխարինելի մի կորուստ է կրում: Երբեմն էլ աճեցման այս անհաւասարութիւնը մարմինի մի կողմին վրայ է նշմարում, մարմինի երկու կէսերը հաւասարապէս շեն աճում: Եթէ որեէ հիւանդութիւն երեխայի զարգացումը չէ խանգարում, միայն յարմար կերպով տրւած մնունդը կարող է նպաստել այդ բնական աճեցման:

Երեխայի գուրս գնալուն վրայ էլ պէտք է հսկել, որովհետև այդ բանի խանգարումը կամ փոփոխութիւնը, մարսողութեան և մննդառութեան վատ պայմաններով տեղի ունենալն է նշանակում: Ինչպէս յայտնի է, կղկղանքը մարսուած մնունդի աւելորդ և անմարսելի մասն է, առաջին օրերում մուժ կանանչ զոյն ունի, յետոյ սովոր պայծառ գեղին զոյն է ստանում և ունենում է թանձր խիւսի թանձրութիւն և առանց հոտի է լինում: Այսպէս էլ պէտք է շաբունակի կաթնտութեան տմբողջ տեսպութեան միջոցում: Երբոր երեխաների կղկղանքը կանանչ զոյնով է լինում և կամ քիչ մնալուց յետոյ այդ զոյնն է ստանում, նշանակում է, որ մարսողութիւնը խանգարած է: Այս գէլքրում, երբեմն սոտա (Bicarbonate de soude) տալով երեխայի փորը շտկում է: Բայց այս բանը միշտ չէ աշողում, այն ժամանակ հարկաւոր է երեխայի սեռունդը փոխել: Խսկ գարշահոտ կանանչ լուծմունքները առաջ են գալիս միկրոբներից, որոնք անհետանում են կախնաթթու (acide lactique), խորաթթու գործածելով:

Դուրս գնալը երեխայի առաջին օրերում օրական 2 կամ 3 անգամ տեղի է ունենում, յետոյ 1 կամ 2 անգամ: Երբոր լուծմունքների թիւը 6 կամ 8-ի է բարձրանում, մարսողական խանգարում է նշանակում: այս պարագայում բժիշկի պէտք է զիմել: Եթէ երկու օրը մի անգամ է գուրս գնում, նշանակում է, ծծմօր կաթը նուազ է կամ երեխայի ստամոքսը չափից աւելի կաթ է մտնում: Բուն պատճառը կարելի է խմանալ երեխան կշռելով: Եթէ ծանրութիւնը աւելանում է, երեխայի շատ կաթ ծծեն է ստուգում, խսկ հակառակ գէպում ծծմօր կաթի նուազութիւնն է հաստատում:

Կաթից ու ծծից կարելուց յետոյ և երկրորդ մանկութեան միջոցում դուրս գնալը օրական մի անգամ տեղի է ունենում, որի յատկութիւնը հետզհետէ չափահաների կղկղանքն է մօտենում:

Երեխայի կղկղանքն չափը նախապէս 10-ից 40 գրամ (2, 34-ից 9, 36 մախալ) է, և հետզհետէ աւելանալով չափահաների արտադրածի կէսին է հաւասարում:

Արհեստական գիեցման մէջ, երբոր երեխան լուծմունք ունի, կաթը կարելի է կտրել գարիի խաշած ջրով, խսկ պնդութեան գէպը ում վարսակի խաշած ջրով:

Բնականից անզօր երեխաներին սնուցանելու եղանակը և կերպը փոխուում են, նրանք չեն կարող առողջ երեխաների նման սովորական կերպով սնանուել, սրանց վրայ առանձին ուշագրութիւն պէտք է դարձնել:

ՍՈՒՃԻՆ ՏԸՐԻՔՈՒՄ.—Ժամանակից առաջ պակաս կամ բնականից տկար ծնւռած երեխաները, և կամ ուրիշներ, որոնք թէս ժամանակին ծնւել և կատարելապէս զարգացել են, բայց միենոյն ժամանակ ծիծ չեն կարող ծծել և կամ իրենց պահանջներին անբաւական մի քանի կաթիլ ծծելուց յետոյ ծիծը թողնում են: Նոյնպէս շրթունքի ճեղք լինելը, լեզուի տակ կապ ունենալը, բմբի վատ կազմւածը ծիծ ուտելու արգելը են լինում: կամ թէ լեզուի տակ զանուած ուռուցքները, գործիքով առնեած երեխաների վաղանցուկ անզամալուծութիւնը, բերանում սպիտակներ (արհե) գոյանալը ծիծ ծծելը անկարելի կամ ցաւալի են դարձնում, այս բոլորը ժամանակաւորապէս կամ մշտակայ կերպով երեխայի ծիծ ուտելուն արգելը են լինում:

Այս արգելքների մեծապոյն մասը բժշկական միջոցներով կարելի է զարմանել, բայց միենոյն ժամանակ անհրաժեշտ է երեխային կերակրել, մանաւանդ եթէ երեխան բնականից վատոյժ է ծնւել, աւելի շուտ կարող է մեռնել:

Այս կարգի երեխաներին հետեւալ կերպով պէտք է սնուցանել:

Ուզզակի ծծից կամ մի դպալով կնոջ կամ իշու կաթը և կամ չաքարաջրով կովի կաթը կաթիլ կաթիլ երեխայի

բերանին մէջ պէտք է կաթեցնել. եթէ երեխայի վատուժութիւնը շարունակէ, մի կերակուրի դգալ շարարաջուրի հետ խառնւած մի շայի դգալ անուշ զինի կարելի է տալ:

Երբեմն պատահում է, որ երեխան նոյն իւկ կուլ չէ տալիս, այս գէպում կաթը երեխայի քթի ծակերից դգալով կամ մարուր մի գործիքով (seringue) կամացուր պէտք է կաթեցնել, հետեւալ զգուշութիւնը գործադրելով: Երեխային օրորոցում կամ մօրը գրկում հորիզոնական դիրքով մէջի վերայ պարկեցնելուց յետոյ, մէկը ձախ ձեռքով երեխայի ճակատն է բռնում, իսկ միւս ձեռքով գործիքի ծայրը քթի ծակերի մէջ մտցնելով գործիքը ճնշում, որից կաթը կաթիլ կաթիլ հոսում և բօղազն է գնում և այնտեղից էլ ստամոքսի մէջ: Այս կերպով երեխային բաղցից մեռնելուց կարելի է պատել:

ԵՐԿՐՈՐԴ ՄԸՆԿՈՒԹԻՒՆ.—Սրանց մնունդի հիմքը պէտք է կաղմէն կաթը, ձուն, ձուկը, միսը, քիչ յետոյ պէտք է աւելացնել կանանչեղիններ: Սրանց աճումը և զարգացումը ճշգելու համար պէտք է անպատճառ կշռել, գէթ շարաթը մի անգամ: Հակառակ այս խնամքներին շատերը գժուար են զարգանում և ենթարկելում են ընդհանուր վատուժութեան: Ո՞վ չէ տեսել այս տիսի երեխաներին, որոնք նեղ կուրծք, թոյլ միսեր և թոյլ մնագառութիւն ունին: Նրանց ընդհանուր առողջապահութեան և մասնաւոր խնամքով կատարւած մնագառութեան խելացի կարգադրութեամբ կարելի է այդ երեխաներին դնել զարգացման նպաստաւոր պայմանների մէջ:

ՄՆԴՅԱՐԸՐ ԳՐԵԽՆԵՐ.—Դիպւածական պարագաներ կան, որոնք բերանի ճանապահով երեխային կերակրելուն արգելք են լինում. այս գէպում սափաւած ենք զրեխով (դէստուր, հօկնա, հիմալայ) ներքեց ոնուցանել: Բերանի զանազան հիւանդութիւններ, բողազի վերքեր, կատար հազի պատճառած անդադրելի փսխումներ, դիֆտէրիֆի մի տեսակը բնական ճանապահով կերակրելու արգելք են լինում: Այս պարագա-

յում, երեխային բաղցից չը մեռցնելու համար հետեւեալ հեղուկը գրեխով տակից ներս տալու է, որի հիմքը կազմում է մսից պատրաստուած պէպտօնը (peptone), որա շափը երեխայի ծանրութեան համեմատ է լինելու, այսինքն իւրաքանչիւք մի քիլո (234 մսխալ) ծանրութեան համար 1 գրամ (0, 234 մսխալ) պէպտօն է հարկաւոր:

Օրինակ, 20 քիլո (279 գրվանքայ) կշռող 8 տարեկան մի երեխայի համար հետեւեալ մնագարաք հեղուկը գրեխելու է:

Պեպտօն 20 գրամ (4, 68 մսխալ)

2ուի գեղնուց 1 հատ

Սօգտ (շիրեն ջուշ) 3 ½ գրամ (0, 81 մսխալ):

Կոլ կաթ կամ մաշջուր 50 գրամ (11, 7 մսխալ): Կոլ 10 քիլո: (138 ½ գրվանքայ) կշռող 15 ամսական երեխայի համար՝

Պեպտօն 10 գրամ (2, 34 մսխալ)

Կոլ կաթ 50 գրամ (11, 7 մսխալ)

2ուի գեղնուց 1 հատ:

Բ.

Երեխաները ունենում են զանազան անհանգստութիւններ, որոնց պատճառը եթէ մարսողական խանգարումը չէ, ատամ հանելուց և զարգացումից են առաջանում:

ԱՏԱՄՆԵՐՈՐԴ ՄԸՆԿՈՒԹԻՒՆ.—Ատամներ հանելը թէ մի հիւանդութիւն չէ, բայց շատ անգամ երեխաներին հիւանդութեանց է արամադրում և ծնողներին անհանգստութիւն պատճառում:

Մի երեխայ, որ մինչև ատամ հանելը ուրախ, գուարժ, քունը, ուտելը և գուրս գնալը կանոնաւոր էր, կորցնում է ախորժակը, առանց պատճառի և պարբերաբար ճչում է, բերանը տար և շարունակ ջուր է հոսում, այտերը փոխին ի փոխ կարմրում են, բունը անհանգիստ և ցնցումներով միշանկեալ է. հաղում է: Բերանը և բօղազը կարմրած և յաճախ սպի-

տակ մաշկերով և փոքր վէրքերով ծածկւած են։ Լուծմունքները աւելանում են (եթէ անվնաս են մնում, ուշադրութիւն չպէտք է գարձնել), երբեմն փսխումներ են պատահում, աշըռ և ականջը բորբոքում են։

Սակայն այս բոլորը այնքան լուրջ բաներ չեն, որքան լուրջ են նեարդների կողմից երեան եկած երեոյթները։ Առամների գժուար գուրս գալը պատճառ է գառնում երբեմն ուղեղի մէջ արիւն հաւաքելու, ուղեղի ծածկոյթի բորբոքման և շատ յաճախ ցնցումների։ Ծնունդի լաւ կարգադրութեամբ երեխաները բաջառողջ են լինում, և բաջառողջութեամբ տամ հանելը հեշտանում է։ Երեխան յաճախ բազցից աւելի ծարաւութիւնից է նեղում։ ծծած կաթը նրա համար ամենալաւ խմելիք է։

Ծծիթ ԿՃԹԵԼՔ.—Ծծից կարելը երբեմն անհանգստութիւններ կամ նոյնիսկ հիւանդութիւններ է առաջացնում։ Կաթից կերակուրների անցնելու փոփոխութիւնն է, որ պատճառ է գառնում անհանգստութիւնների, որոնք պահեցողութեամբ կարող են անցնել։ Ծնհանգիստ եղող երեխաներին ուտելիք ըսպէտք է տալ, գեռ բոլորավին ծծից չը կտրւած երեխաներին կաթը բաւական է, իսկ ծծից կտրւածներին միայն պէտք է տալ կաթ և մսաջուր և աւելի մեծ երեխաներին հեղուկ կամ կէս հեղուկ ուտելիքներ։ Կաթից և մսաջրից յետոյ պէտքէ տալ ապուր, և տակաւ առ տակաւ ախորժակը բացւելուն համեմատ սովորած կերակուրներից։

Բացի կաթից, երեխայի անհանգստութեան ժամանակ կարելի է տալ սովորաբար խմած հեղուկներից մէկը, օրինակ, լիմոմադ, և երբ որ տաքութիւն ունի և ախորժակ չունի, մի բանի կաթիլ գինի խառնւած ջուր։

ԶԱՐԳԵՑՈՒՄ.—Երեխայի աճումը և զարգացումը անհանգստութեան մի աղբիւր է, որի վրայ ուշադրութիւն դարձնել արժէ։ Եյս անհանգստութիւնը աւելի յաճախ արբունքի ժամանակ է

առաջ գալիս, երբ որ երեխան մտաւոր աշխատութեամբ է պարագում կամ շատ անգամ իր վիճակին անհամապատասխան սնունդ է առնում։ Չափահասութեան մօտեցած ժամանակ երեխայի հասակը տարեկան 5 սամստիմէտր բարձրանում և ծանրութիւնը մեծ չափով աւելանում է, բայց այս բոլորից աւելի ուշադրութիւն գրաւող բանը առաջ եկած կազմական ձեափոխութեան շարժումն է, որը արբունքի է առաջնորդում։ Եւ այս բոլորը առանց անպատճենութիւնների չեն անցնում, երեխան յաճախ տկարանում, նիհարանում, գունաթափւում և ուժասպառում է, մեղկ և անդգայ է գառնում, աշխատելու և զբուանիրի տրամադրութիւն չունի, ամենափոքր շարժումով չնշասպառ է լինում։ Ունի սրտի բարախում, արեան պակասութիւն, քթի արիւնահօսում, գլխացաւ, ջղացաւեր, անմարսողութիւն, յօդացաւեր, սուկրացաւեր, և այլն։ Բայց այս բոլորը կարող են անհետանալ մննդառական առողջապահութեան լաւ և պատշաճաւոր կարգագրութեամբ։ Բնութիւնը այս միջոցում երեխայի կազմւածքի մեծ փոփոխութիւններ և յեղափոխութիւններ է մտցնում և այս պատճառով կազմւածքը ահազին էնէրգիա և ոյժ է սպառում, որին չէ կարելի փոխարինել մինչեւ այն ժամանակ սովորական եղող սնունդով, հարկաւոր է երեխայի սնունդի մէջ բարեփոխութիւններ մտցնել։

Եյս կարգի երեխաներին պէտք է տալ, կաթ, ձու, մանաւանդ գեղնուցը, հաց, կանանշեղններ, լորիա, սիսեռ, սով, չափաւոր միս և ձուկ։

Պ.

Սուր հիւանդութիւնների մէջ երեխային չէ կարելի տալ առողջ ժամանակ տրւած սնունդներից, այս կարգի հիւանդութիւնների մէջ առանձին ուշադրութիւն պէտքէ գարձնել ուտելիքի և խմելիքի վրայ։

ՈՒՑԵԼԻՔՆԵՐ.—Տարութիւն ունեցող հիւանդ երեխաների պահեցողութիւնը (diète, դիէտ)՝ նրանց ունեցած ծարաւի և անպիսով ժամեմատ պէտք է կարգադրել: Երեխան կուզէ խմել և չի ուզեր ուտել: Հետեաբար նրան արւելիք հեղուկները միևնոյն ժամանակ պէտք է լինին ճշմարիս սնունդներ, նախ կաթ, իսկ մսաջուրը երկրորդ տեղն է բռնում, յետոյ զալիս է մի քանի կաթի գինի խառնած զուր, և պարագաների համեմատ թէյ, սուրճ կամ շոկոլատ: Կարճատև ջերմով հիւանդութիւնների մէջ երեխայի ընազդումին գոհացում տալ կարելի է միայն խմելիք տալով, բան թէ ուտելիք: Բայց, երկարատև ջերմով հիւանդութիւնների մէջ, ինչպէս է տիֆր, չէ կարելի այսպէս վարել: Հիւանդութեան երկար տևողութեան համեմատ մարմինը մեծ կորուստներ է ունենալում, հարկաւոր է այդ կրտսեանները դարձանել և ոյժերը պահել յարմար սնունդով, ինչպէս կաթ, մսաջուր, ձու, կաթով սուրճ, լիմոնադ. իսկ ուժատու գեղեր տալը բժշկի գործն է: Այս կերպով երեխան ոչ թէ իսկապէս պահեցողութեան է ենթարկում, այլ իր առողջ ժամանակի ստացած սնունդի կէսից աւելին է ընդունում: Օրինակ, 10 տարեկան հիւանդին պէտք է տալ օրական 1000 գրամ (234 մսխալ) կաթ, նոյնան մսաջուր և նոյնան գիննեխառն (200 գրամ, 47 մսխալ գինի) չուր, 100 գրամ (23,4 մսխալ) շաբար, որ անում է 42 գրամ (9, 72 մսխալ) ընասպիտային, 40 գրամ (9, 36 մսխալ) խւային և 168 գրամ (39,29 մսխալ) ջրածխային նիւթ. մինչդեռ առողջ ժամանակ հարկաւոր էր առաջինից 64 գրամ (14,9 մսխալ) երկրորդից 46 գրամ (10,7 մսխալ), և երրորդից 200 գրամ (47 մսխալ): Տարցոցը անցնելուց յետոյ կարելի է տալ օրական մի ձու և աստիճանաբար 25—50—100 գրամ (5,85—11,6—23,4 մսխալ) միս, մի քիչ հաց, ապուր և բիսկիւտ: **ՍԿԵՐԱԾԻՆԻ** նման երեխաների հիւանդութեանց մէջ կաթը ամենայարմարն է և մսաջրից վէց անգամ աւելի սնըն-

դարար. եթէ երեխայի երիկամները չեն վնասուել, որը ուսուցներով է յայտնուում, կարելի է նաև տալ մսի հիւթ, բիփսաւէքս, թթու ջուր:

ՃԵՐՄԱՇԽՆԴԵՐԻ (մալարիա) մէջ սննդաբար ուտելիքներ պէտք է տալ:

Դիֆքչիրիի մէջ նոյնպէս առատ և սննդաբար ուտելիքներ, կաթ, մսաջուր, մսի հիւթ, ձու և ինչ բան որ երեխաները ցանկանում են պէտք է տալ:

ԹՈՓԱՑԻՆ ԲՈՐԲՈՔՈՒՄԻ մէջ ուժատու սնունդները՝ կաթ, մսաջուր, և ջրախառն գինին մեծ տեղ են բռնում. իսկ թոքային մաշկի սորբոքման (pleurésie) մէջ կաթը և՝ սնունդ ե' գեղ է: Նոյնպէս Յօդացաւի (քէվմատիզմ, ցհմատիսմ) մէջ կաթը իբրև գեղ է:

ՀՄՊԳԵԼԻՆԵՐ.—Հասարակ ըմպելիները տաքցոց ունեցող երեխաների մօտ կարենը գեր են խաղում. եթէ այս փոքրիկ հիւանդներին թոյլ տանք, անդադար խմելու են: Զափաւորապէս տալու է, չը պէտք է ծարաւութիւնից նեղել: Ջատ սխալ է կարծել թէ ըմպելիները, մանւաւանդ ջուրը միասակար է: Երբ որ ջրի ամանը լիբը չէ լինում, երեխաները չեն կշտանում, հետեաբար փոքր հիւանդի համար մի փոքր քածակ ունենալու է և այդ ամանով միշտ լիբը տալու է: Զուրը ոչ թէ միայն ծարաւն է յագեցնում և տարութիւնը մեղմացնում, այլև օրգանիզմի քայրայումին է դիմադրում:

Հիւանդ երեխաներին տրւելիք ջուրի տաքութիւնը սենեակի տարութիւնն է ունենալու: Այս ժամանակ ջուրը տաք պէտք է տալ, երբ որ ցանկանում ենք երեխային տաքացնել և կամ մորթի վրայ զուրս տալը հեշտացնել. ուրիշ ժամանակ տաք ջուրը վնասակար է: Իսկ խաշած բոյսերի ջուրերի մէջ կարելի է տալ գարիի ջուրը, որ քիչ սննդաբար է, բիփնձի ջուրը լուծմունքի մէջ լաւ է, մոլոշի ջուրը (մասնէ, պիւր հատմի) հազը մեղմացնող է, թմբին (tilleul) կամ նարինչի

ջուրը անքնութեան և անխօնի ջուրը դժուար մարսողութեան մէջ նպաստաւոր են:

Իբրի բմպելի կարելի է տալ կաթ, մսաջուր, լիմոնաջուր, նարնջաջուր, կեռասի և հաղարջի օշարակներ:

Պ.

Բացի երեխաների սուր հիւանդութիւններից, նրանց երկարատե (խրոնիք) հիւանդութիւնների մէջ մնունդի ընտրութեան վրայ մեծ ուշադրութիւն դարձնել է հարկաւոր: Խրոնիք հիւանդութիւնները թէս բժիշկի միջցով դարմանելու են, սակայն ծնողները այդ բանում մեծ գեր են խազում իրենց երեխաներին արելիք մնունդների ընտրութիւնը զիտակցաբար կատարելով: Հատ անդամ, առանց բժիշկի օգնութեան, միայն լաւ և նպատակայարմար մնունդով այդ հիւանդութիւններից շատերը բուժում են: Այդ կարգի հիւանդութիւններից մի քանիսը յիշելով ցոյց կը տանը նրանց յատուկ մննդառութեանց եղանակը:

ԸՆՄԵՐՍՈՂՅՈՒԹԻՒՆ.—Եթէ կայ մի հիւանդութիւն, որի մէջ մննդառութեան առողջապահութիւնը օգտակար գեր է խաղում, այն էլ մարսողական գործարանի խանդարումն է, և այնքան շատ է պատահում, որ երեխաների հիւանդութեանց մէջ մէկ երրդ տեղն է բռնում: Այս հիւանդութեան զլիսաւոր ախտանիշը լուծմունքն է:

Այս հիւանդութիւնը առաջանում է աւելորդ ուտելիք կամ դժուարամարս բաներ տալուց, մի քանի օր թեթև ուտելիքներ տալով յաճախ անցնում է: Եթէ սկզբից ուշադրութիւն չէ դարձւում, երեխայի մարմինի աճումը պակասում է և ոչ թէ միայն լուծմունքը խրոնիք է դառնում, այլև առաջ են դալիս կազմական հիւանդութիւններ՝ խոյլ, աւշային կազմ, թորախտ, ոսկորներէ թուլութիւն, ևայլն:

Նորածին երեխաների համար պէտք է բարեփոխել ծիծտողի ուտելիքները և կամ ստնտուն փոխել: Արանից յետոյ երեխան եթէ շը լաւանայ, ծիծ տալը պակասեցնելու է, օրինակ, Յ ժամը մի անգամ և Յ բոպէ տեղողութեամբ պէտք է տալ: Եթէ երեխան կովի կամ այծի կաթով է կերակրում, կամ եթէ ժամանակից առաջ ծծից է կտրւած, այն ժամանակ հարկաւոր է երեխային ստնտուի ծծով կերակրել և մեր նշանակած չափերով և ժամերով ծիծ տալ: Մանաւանդ հարկաւոր է ծնողներին մի անգամ ևս յիշեցնել, որ ֆարեն լակտէները (կաթնալիւր, երեխայի կերակրուր) վնասակար են, կաթի տեղը չեն բռնում, ալիւրոտ բաները, ապուրները, մսաջուրը, միսի հիւթը, գինիով խառն ջուրը, և այլն, նորածին երեխաներին յարմար չեն, վնասակար են:

Անմարսողութիւն ունեցող երեխաներին ծծից կտրելը մեծ զգուշութեամբ և համրերութեամբ պէտք է կատարել: Եօթներորդ կամ ութերորդ ամսում օրը մի անգամ, յետոյ օրը երկու անգամ առողջ երեխաների համար մեր նշանակած խիւսերից մին տալու է:

Երեխայի մնունդը չափաւոր և ընտրովի պէտք է լինի: Կանոնաւոր ժամերով պէտք է տալ կովի լաւ կաթ, շատ թերխաց թարմ ձու, կաթով կամ մսաջրով պատրաստուած թեթև, յետոյ աւելի թանձր խիւսեր:

Այս անմարսողութեան ենթարկողները երբեմն էլ պնդութիւն են ունենում. սրանց պէտք է տալ լաւ եփած ուտելիքներ, թարմ բանջարեղիններ, պատուղների կօմպօտներ, և այլն: Խոկ լուծմունք ունեցողներին միայն կաթ պէտք է տալ, լաւանալուց յետոյ թանձր խիւսեր, թերխաց թարմ ձու, կաթ, միս, մանաւանդ հում միս:

Երկրորդ մանկութեան մէջ անմարսողութիւնը ընդհանրապէս ստամոքսի ընդլայնում է պատճառում: Այս երեխաները երբեմն պնդութիւն և երբեմն լուծմունք են ունենում,

շատ են ուտոմ և շատ խմում։ Մրանք առաւօտները մի թերիաց ձու կամ թանձր խիստ պէտք է ուտեն։ խկ կէսօրին և երեկոյին թանձր ապուբներ, ձու, սեր, ձուկ, լաւ եփած կամ ճմլած միս, թարմ կանաչեղիններ կամ գետնախնձոր, կաթնապուր, թարմ պանիր, լաւ հասունացած կամ եփած պտուղներ, կարմրած հայ։ Խրաքանչիւր ճաշի ժամանակ մի բաժակ ջուր տալ և ճաշամիջոցներին ոչինչ։ 8—10 տարեկանից ցած եղող երեխանները առաւօտ և երեկոյ մի բաժակ կաթ պէտք է առնեն։

ՈՍԿՈՐՆԵՐԻ ԹՌՈՒԼՈՒԹԻՒՆ.—Այս հիւանդութիւնը գէշ և անբնական մննդառութիւնից է առաջ գալիս. սրա հիմնական դարմանը լաւ կարգադրւած մնունդն է։ Այս հիւանդութեան մէջ հետեւեալ չորս պայմաններով պէտք է առաջագրւել։

1.—**Մինչև 6—8 ամսական երեխային մօր կամ ստնտուի ծիծը տալ և ուրիշ ոչինչ։ Ընմարսութիւնը չը պատահելու համար, երեխային կանուխից պէտք է վարժեցնել կանոնաւոր մննդառութեան։**

2.—**Այս տարիից յետոյ մի անդամւայ ծծի տեղ կարելի է տալ կաթով, սպիտակ հացով, փռան մէջ չորացրած ալիւրով, բրինձով կամ ոսլայով պատրաստւած մի խիստ և կամ տեղի լաւ, հացահատիկներով պատրաստւած ապուրներ, որոնք իրենց մէջ պարունակում են ոսկորների կազմութեանը նպաստով կիրի աղեր։**

3.—**Առաջին 12 կամ 16 ատամները հանելուց առաջ ծծից չը կտրել. այնժամանակ մննդառութիւնը աստիճանաբար մննդարար պէտք է լինի, ինչպէս լաւ միս, ձուկ, ձու, կաթնեղին, և խմելիքը շափաւոր։ Կոշտ ուտելիքներից զգուշանալու է։**

4.—**Իբրև դեղ ձկան դեղին խող տալու է և կերակուրների վրայ ոսկորի փօշի պէտք է ցանել։ Ոսկորի փոշին կա-**

րելի է պատրաստել այսպէս, միսի ոսկորները փռան մէջ չը սկանալու աստիճան այրելուց յետոյ, սանդի մէջ ծեծելով փոշիացնել և այս փոշին բարակ մարմաշից (թէնզիւֆ, տիւլպէնդ) անցնել։

ԱՇԱՅԱՍԻԿ ՈՍԿՈՐՆԵՐԻ ԹՌՈՒԼՈՒԹԻՒՆ.—Այս հիւանդութեան մէջ արեան պակասութիւնը հազուադէպ մի բան չէ։ Այս հիւանդութիւնը չը պէտք է շփոթել աւշային կազմածքի հետ. աւշային եղողնե, որ ունին գունատ գէմք, կապոյտ աշքեր, թոյլ միսեր։ Մրանք ձկան իւղով են առողջանում։ Խսկ արեան պակասութիւնը ձկան իւղով չէ զարմանւում, այլ երկաթի բաղադրութիւններով և միսով։ Արեան պակասութիւնը յայտնեւում է մարսողական և նեարդային խանգարումներով, անախորժակութիւննով, սրտի բարախումներով, նեարդացաւերով, յոզնածութեամբ, և այն։

ՄՐԵՑՆ ՊԱԿԱՍՈՒԹԻՒՆ.—Մանկութեան մէջ արեան պակասութիւնը հազուադէպ մի բան չէ։ Այս հիւանդութիւնը չը պէտք է շփոթել աւշային կազմածքի հետ. աւշային եղողնե, որ ունին գունատ գէմք, կապոյտ աշքեր, թոյլ միսեր։ Մրանք ձկան իւղով են առողջանում։ Խսկ արեան պակասութիւնը ձկան իւղով չէ զարմանւում, այլ երկաթի բաղադրութիւններով և միսով։ Արեան պակասութիւնը յայտնեւում է մարսողական և նեարդային խանգարումներով, անախորժակութիւննով, սրտի բարախումներով, նեարդացաւերով, յոզնածութեամբ, և այն։

ՍԱԿԱԿԱՐԻՄՆ ՓՈՐՐ ԵՐԵԽԱՆՆԵՐԸ ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ ԱԽԱԼ ՀԱՍԿԱԳՄԱԴ ԱՌՈՂՋԱՎԱՀՈՒԹԵԱՆ ԳՈՒՆԵՐՆ ԵՆ։ ՕԳԻԳ և լոյսից զրկելով այս հիւանդութիւնը առաջ է գալիս, մանաւանդ մնունդի մասին լաւ հոգատարութիւնը չը լինելուց։ Այս կարգի փորբիկներին տւել են տարօրինակ ուտելիքներ, բարդ համեմանքներ (you sauces), որոնք 20 տարեկանների ստամոքսով հազիւ մարսելի են, կամ թէ ոսլային և ալիւրային ուտելիքներ, ֆարին լակտէներ, թարմ կանաչեղիններ, որոնք ստամոքսը լցնում են առանց խսկապէս մնուցանելու, սրանց վրայ աւելացրէք շաքարեղինները և կարկանդակները։

ՍԱԿԱԿԱՐԻՄՆ ԵՐԵԽԱՆՆԵՐԻՆ ՊԷՏՔ Է ՏԱԼ ՄԱՐՈՒՐ ԿԱՅՑ, ԿԱԺԵՈՎ, ՀԱՑՈՎ ԿԱՄ ԲԻՍԿՈՍՊ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ ԽԻՍԵՐ, ՁՈՒ,

երեսից իւղը վերցրած մսաջուր, մսաջրով և կարմրացրած հացով պատրաստած ապուրներ: 12—15 ամսականից յետոյ տալ միսի հիւթ և նոյնիսկ ճմլւած միս:

8 և 11 տարեկանի միջն եղող երեխաները զարգացման հետևանքով խօօրօգ հիւանդութիւնն են ստանում. սրանց զէմբերը դեղնում և մսերը թուլանում են: Այս հիւանդութիւնը, աճեցման շրջանի շարունակութեան հետեանքով, դժուար բուժելի է: Սակայն կարելի է բարեկամ նրանց բաւականաշափ բորակածնային մնունդներ տալով:

Այս հիւանդութեան ենթակայ ջահնել աղջիկներին բուսային մնունդներից աւելի կենդանային մնունդներ տալու է, խորոված կամ կասկառած միս, երբեմն եղան, ոչխարի կամ հորժի մանրացրած հում միս, գառան կամ թեաւորների միս, ձու, կաթ: Մրանց վրայ պէտք է աւելացնել ոսլային նիւթեր, հաց, և կերակուրներին փոփոխութիւն տալու համար երբեմն բանցարեղիներ, Վերջապէս այս մննդառութեան հետ երեխաներին վարժեցնելու է արեի տակ և բացօղեայ կեաների: ՄԻՃԱՑԻՆ ԿԱԶՄԻԾԾՔ և ԽՈՅԼ.—Այս տեսակ կազմւածքի մէջ աւելի շատ ջուր և իւղ կայ, քան թէ ընասպիտ և աղեր: Որովհետեւ, այդ կարգի երեխաներին տւել են ոշ-բորակածնային շատ ուտելիքներ իսկ բորակածնային նիւթեր քիչ շափով: Այս երեխաները եթէ լուծմունք կամ անմարսողութիւն ունենալու լինին, նախ կաթ պէտք է տալ, մի ժամանակ յետոյ ձու և աստիճանաբար աւելի մննդառու նիւթեր: Մարսողական խանդարում չունեցողներին պէտք է տալ մաքուր կաթ, ձու, միս, ձուկ, պանիր, բանցարեղին և հացատիներ, պառուներ, խաղող, և եթէ երեխան կարողանայ մարսել ձկան իւղ:

ԹՈՐԲԵԽԾ.—Մանկութեան մէջ երեան եկած թորախար խնամուտ և մասնաւոր մի մննդառութիւն է պահանջում, որը եթէ լաւ կարգադրւած լինի կարող է դարմանել հիւանդութիւնը

Առհասարակ թորախտաւորներին երկու բան է հարկաւոր, լաւ մնունդ և մարուր օդ: Եթէ երեխան տարութիւն չունի և ստամոքսը լաւ է գործուն, առողջանալլ աւելի հաւանական է: Կաթը լաւագոյն մնունդն է, օգտակար են նաև խաղային և ոսլային նիւթերը: Այս թորախտաւոր երեխան, որ գիրանում է, յոյս կայ լաւանալու:

Հում միսը թորախտի դարմանումի մէջ առաջնակարգ տեղ է բռնում, գլխաւորաբար նրա քամուած ջուրն են տալիս: Միսերը հիւանդի ճաշակին և ախորժակին համեմատ կարելի է պատրաստել, սրանց վրայ պէտք է աւելացնել բորակածինով հարուստ բուսեղիներ, ինչպէս լոբիա: ոսպ, սիսեռ և ոսլային նիւթեր, ինչպէս բրինձ, գետնախմնձոր: Ճոկոլատը, բուսային ալիվները, ձևով և կաթով պատրաստւած կերակուրները, ձևով և կաթով պատրաստւած կերակուրները յարմար են: Ձկան իւղը առաջին կարգի խաղային մի մնունդ է, բացի խաղային մասից, նրա մէջ կան ուրիշ օգտակար նիւթեր:

ԶՂԱՅԻՆ ԵՆԵԽԵՆԵՐ.—Զղային երեխաների մննդառական առողջապահութիւնը մանրակրիտ պէտք է լինի: Նախ և առաջ եթէ նա ծնւել է չափաղանց զղային մի մօրից, նրա ծիծը չը պէտք է ծծէ, այլ նրան հարկաւոր է լաւ, հանդարտ առողջակազմ մի ստոնդու: Ծծից կտրելուց յետոյ, նրան չը պէտք է տալ ալկոլ պարունակող որեւէ խմիչք, նոյնպէս թէ սուրճ և ուրիշ գրգռիչ բաներ, համեմանքներ, ծանր և դժուար ուտելիքներ:

Կաթը զղային երեխաների անքունութիւնը դարմանելու մէջ մեծ ծառայութիւն է մատուցանում:

Փոքր երեխաներին փոքր մաքուր տեղ գնելով նրանց զինի տալը շատ վատ և վնասակար մի սովորութիւն է, ինչպէս տեսամնք, բացի հիւանդութեան պարագաներից, երեխաներին ոգելից ըսպելիներ չէ կարելի տալ:

Ե.

ՄՆՈՒՆԴԸ ՍՊԸԳԻՆՄԱՆ ՄԵՋ.—Հիւանդութիւնից նոր վեր կացող երեխաները, հիւանդութեան ընթացրում օրգանիզմի կորցրածի տեղը լրացնելու մեծ կարիք են զգում, և այս բանին գորացում տալը շատ անգամ գորուար է լինում, փորրիկ հիւանդը հիւանդութիւնից վեր կենալու առաջին օրերում թեթև մնունդներով կարողանում է ապրել, բայց բիշ յետոյ երբ որ հիւաւածքների վերանորոգումը փութով է տեղի ունենում, աւելի մեծ շափով մնունդի կարիք է զգում:

Ծնողները յաճախ զարմանում են, որ երեխաները հիւանդիւնդութեան ժամանակից աւելի ապագինման առաջին օրերում աւելի են նիհարանում: Այս երեսոյթը շատ պարզ կերպով է բացատրում. ապագինման սկիզբներում, մնունդները այնքան հեշտութեամբ արեան չեն վերածում (assimilation), այլ ընդհակառակը սպառւած նիւթերը մարմինից աւելի մեծ շափով են արտաքսում: Բայց լաւանալուց յետոյ, երեխան մի կողմից իր կորցրածի տեղն է լցնում և միւս կողմից սկսում է ծանրութեան և հասակի կողմից շահել: Մի անգամ ընդմիշտ պէտք է զիտնալ, որ սուր հիւանդութիւններից շատերի մէջ երեխայի հասակը աւելանում է:

Ծծկեր երեխաները լաւանալուց յետոյ էլ պէտք է շարունակին ծիծ ուտելը, մինչե որ լաւ կերպով շառողջանան, ծծից չը պէտք է կտրել: Եթէ երեխայի տարիքը ներում և ծծից կտրելու ժամանակը մօտեցել է, մեր նախապէս տաւծ խորհուրդներին հետեւելով աստիճանաբար խիւսից անցնելու է միւս ուտելիքներին, միշտ խորեմութեամբ և զգուշութեամբ:

Իսկ երկրորդ մանկութեան մէջ, որ երեխան արգին ծծից կտրած և զրեթէ ամեն բան ուտելու վարժւած է, մնունդների մէջ փոփոխութիւն չը պէտք է մտցնել, շարունակելու է նոյն ուտելիքները տալ, միայն մի բիշ աւելի պարզ և թեթև պատրաստած և բիշ բանակութեամբ:

Պէտք չէ մոռանալ նաև, որ հիւանդութեան մէջ երկար պահեցողութեամբ մարսելու կարողութիւնը նւազում է, և շատ անգամ տեսնելում է, որ երեխաները հիւանդութիւնից վեր կենալուց յետոյ անօթութիւնից մեռնելու աստիճան իրենց ախորժակը և մհանեւելու կարիքը կորցնում են:

Տեսնդու հիւանդութիւններից, մանաւանդ տիֆից աղատւելուց յետոյ, կաթը ամենալաւ մնունդն է, հիւսւածքների կորուստը դարձանելու տեսակէտից: Հիւանդութեան մէջ, ինչպէս նաև ապագինման սկիզբներում կաթը օրգանիզմի պահանջներին մասսամբ բաւականութիւն տալիս է: Այս գէպքում երեսը վեր առնած կաթ պէտք է տալ, և հսկելու է, որ երեխան պնդութիւն չունենայ, միշտ կակուղ գուրս գնայ:

ՄՆՈՒՆԴԻ ԸՆԾՐՈՒԹԻՒՆԸ.—Երեխայի ախորժակին և ճաշակին համեմատ ջրով, կաթով կամ մսաջրով սպատրաստած իւզալի կամ անիւզ ապուրներ պէտք է տալ, հացը, եթէ լաւ եփած, լաւ տեսակից և բիշ օթեկ (հին) է, ապուրի նման հիմնական մի մնունդ է: Մրա հետ միասին պէտք է տալ նաև ձու, ձուկ, միս, կանանչեղիններ, եփած պտուղներ: Նախ պէտք է տալ թերլսաշ ձու, յետոյ կարելի է տալ թեթև ձուկեր, յետոյ մսի հիւթ և աւելի յետոյ սովորական միս:

Կոտլէտը կամ բիշ խորոված ոչխարի ճուռը (ժիգօ gigot) ախորժակ չունեցողների համար հաճելի և մննդարար մի ուտելիք է:

Ճուռի խորովածը ապագինուղների համար առաջին մննդար ուտելիքն է. նոյնպէս եղի միսը:

Մի բանի բանջարեղիններ, ինչպէս լաւ եփած հաջար, սպանախ, ծներեկ, իշերդ, և միսի հիւթի մէջ ճմլած գետնախնձորը աւելի յարմար են գալիս, բան թէ գժուարամար կաղամբը և ստեղպենը:

Խմբրեղինները յարմար չեն, միայն բիւսկիտ կարելի է տալ: Նարինջը և լաւ հասունացած խաղողը, կուտերից և մաշկերից զատւած վիճակի մէջ, և միթանի եփած կամ կօմպօտ

պառակները, խնձոր, տանձ, սպոր, և այլն, կարելի է տալ:

ԵԽՈՐԺԾՎԱԼ Ի՞ՆՉՊԵՍ ԲԱՅ ԱՆԵԼ.—Միւրած կերակուրի տեսքը և հոտը, մարմնամարզութիւնը, բացօդեայ կեանքը և օգափոխութիւնը ախորժակ բաց անելու յաճախ բաւական են, Քինաբինայի կեզելի նման բուսեղչն գեղերի խաշած ջուրը թէ ախորժակ է բացանում և թէ ոյժ տալիս:

ԳՃՈՒԱՐ ՄԱՐՍՈՂՈՒԹԻՒՆԸ Ի՞ՆՉՊԵՍ ՀԵՃՏԱՑՆԵԼ.—Եթէ հիւանգութիւնից նոր վերկացողը գժուար է մարսում, ուտելիքների մէջ փոփոխութիւն պէտք է մտցնել և միայն այնպիսի ուտելիքներ տալ, որոնք հեշտամարս են և այն էլ շափառը: Մրանց պէտք է ստիպել, որ կամաց կամաց ուտեն և երկար ժամանակ ծամեն, որովհետեւ, լաւ ծամւած պատառը կէս մարսւած է համարւում:

Մեր ասածները հետեեալ հինգ պատուէրների մէջ կամփոփենք, որոնց պէտք է հետեել, երեխաների ապագինման մէջ:

1—**ՄՆՈՒՆԴՆԵՐԻց ընտրել նրանք, որոնք երեխան առողջ եղած ժամանակ սիրում է և լաւ մարսում:**

2—**Ուտելիքները կարելի եղածին շափ մանրացրած և ճմլւած տալ և հսկել, որ լաւ ծամեն:**

3—**Ամեն անգամ կերակուրները քիչ շափով և եթէ հնարաւոր է, շուտ շուտ, բայց կարելի եղածին շափ առողջ ժամանակի միներին ժամենոյն ժամերին տալ:**

4—**Դուրս գնալուն վրայ հսկելով վստահ լինել, որ մարսովութիւնը լաւ է տեղի ունենում, և պատահելիք լուծմանքները, պնդութիւնը, սանջուները, փսխումները, և այլն, առանց զարմանի և անխնամ չի թողով:**

5—**Վերջապէս, ՚ի հարկին երեխային կշռելով իմանալ, որ մարմինը իր կորուսածի տեղը լրացնում է թէ ոչ: Այս վերջին գէպրում առանց ժամանակ կորցնելու պատճառը վնասագործիչի խորհուրդին դիմել:**

Յ Ա Ւ Ե Լ Ի Ւ Ծ Ժ

Հետեեալ ցուցակի մէջ նշանակւած գլքերը կարող են օգտակար խորհրդատուներ լինել այն ծնողներին, որոնք կը ցանկան իրենց և իրենց երեխաների վերաբերմամբ մայրական պարտականութիւնը լիուվի կատարել:

- 1—Ամունական առողջապահութիւն. Դոկտ. կ. Քլմօն թարգմ. Յակով Սիսակ, 1891. Կ. Պօլիս գին 40 կոպ.
- 2—Առողջապահութիւն եւ բնախօսութիւն ամունութեան. Ա. Դըրէլ, թարգմ. Պ. Ներշապուհ, 1886, Կ. Պօլիս. գին 1 ր. 50 կ.
- 3—Առողջապահութիւն եւ տածումն առաջին եւ երկրորդ մանկութեան, 2 մաս, Դոկտ. Փէշտիմալհեան Փաշա, 1880, Կ. Պօլիս, գին — 40 կ.
- 4—Դիեցումն. Դոկտ. Վ. Յ. Թորգոմեան, 1888 Կ. Պօլիս. գին — 40 կ.
- 5—Թէ ինչ է իստերին. թարգ. Մ. Կ. Նազիկեան, 1900 Կ. Պօլիս գին — 25 կ.
- 6—Ծննդական զործարանք. Դոկտ. Ն. Տաղաւարեան, 1899. Կ. Պօլիս գին — 45 կ.
- 7—Կինն իբրեւ ամուսին. Պրօֆ. Հ. Գլէնքէ, թարգմ. Նազիկեան, 1894, Կ. Պօլիս գին 1 ր. 60 կ.
- 8—Կինն իբրեւ օրիորդ. Կոյն, թարգ. Կոյն, 1901, Պօլիս գին — 80 կ.
- 9—Մայրը, Կոյն, թարգմ. Կոյն, 1894. Կ. Պօլիս, գին 25 կ.
- 10—Մանկանց բժիշկը: Դոկտ. Մինէճեան, Կ. Պօլիս գ. 20 կ.
- 11—Մանկատածութիւն. Դոկտ. Մէրվիչէն, 2 հատոր. 1844. Կ. Պօլիս գին 1 ր. 60 կ.
- 12—Մարդկային սաղմնախօսութիւն. Դոկտ. Տաղաւարեան, 1901, Կ. Պօլիս, գին — 25 կ.
- 13—Կարգալ նաև Արեւելեան Մամլոյ մէջ մեր գրած հետեեալ



- բնդարձակ յօդւածները, եթէ ձեռք բերել կարելի լինի:
Կամի վրայ կարետը զիտելիք. 1894 №№ 9—10—11.
Մանկան ղիեցումը. 1894 № 23 և 1895 №№ 14—
15—16—17—18—19:
Նորածին մանկանց առողջապահութիւնը. 1895 №№
20—22:
Միսի վրայ կարետը զիտելիք, 1894 №№ 13—14—15
—16—17:
14—Առաջին օգնութիւն մինչեւ բժշկի գալը. Բժ. Ա. Բու-
դարկան, Ս. Պետրոսուրդ, գին 5 կոտէկ, և նոյն հե-
ղինակի հետեւալ և միւս բոլոր դործերը:
15—Վարակիչ հիանդութիւններ. 5 կոպ.
16—Ի՞նչ է սիֆիլիսը, 10 կոպ.
17—Առողջապահական զրոյցներ, 5 կոպ.
18—Աշակերտի առողջապահութիւն. 5 կոպ.
19—Մարմնամարզութիւն. 20 կոպ.
20—Առողջ հոգին առողջ մարմնի մէջ. 10 կոպ.
21—Դեղձախտ. 10 կոպ.
22—Մանկավարժական համառոտ զրոյցներ. 15 կոպ.
23—Ժառանգականութիւն եւ դաստիարակութիւն 15 կոպ.
24—Նույր նորատի կանանց. 20 կոպ.
25—Խնամատարութիւն առողջ երեխաների. բժիշկ Վ. Ար-
ծրունի, 1889, Թիֆլիս. 25 կ. և հեղինակի հետե-
ւալ և միւս բոլոր դործերը:
26—Ամուսնութիւն. 75 կոպ.
27—Աղջիկ.
28—Նորածին երեխաների հիանդութիւնները. 1902 Թիֆ-
լիս. 5 կոպ.
29—Վատ ցաւ Միֆիլիս, Թոռակստ 10 կ. Վարակիչ հիան-
դութիւններ, ՄԵ Խմիր, ՄԵ ծխիր:
30—Բժշկի համաները երիտասարդ մօքը Գոկտ. Վիճելմ
Պլատ, թարգմ. Տիկին Զ. Զիլինկարկան, 1898 Ազեր-
սահմանապատճեն, գին 50 կոպ.

- 31—Մանուկների հոգատարութիւնը է. Ա. Պօկրօվսկիյ, թրգմ.
բժ. Թ. Զաքարիան, 1894, Թիֆլիս, գին. 20 կոպ.
32—Մանկատածութիւն. բժ. Տէր-Գրիգորիան (Ղզլարեցի), 1887
Թիֆլիս, 50 կոպ.
33—Մարտկան դաստիարակութիւնը բնուրեան վրայ հիմնաւծ.
Քամբուն, թրգմ. Դր. Շահրուդաղեան. 1881 Թիֆ-
լիս. 40 կոպ.
34—Լուիզա Բիւկինէրի Կոնջ կոչումը և դաստիարակութիւնը,
Կոյն թարգմանչից, 1884, Թիֆլիս. 40 կոպ.
35—Խորհուրդներ ինդէլիգենց մարերին. Գէրտի, թրգմ. Ն. Դաւ-
թեան. 1894, Բագու. 15 կոպ.
36—Բժշկական և առողջապահական մի բանի ամենակարեւոր
և տարրական գիտելիք. Բժպ. Բ. Նաւասարդկան, 1896,
Թիֆլիս 40 կոպ.
37—Առողջապահութիւն մանկական հասակի, Բժպ. Ա. Բա-
րյական, 1882, Թիֆլիս 20 կոպ.
38—Բժշկարան, Բժ. Լիոն Տիգրանէան, 1892, Թիֆլիս 2 բուր.
39—Հանրամատչելի բժշկարան. Բժ. Տէր-Գրիգորիան (Թիֆ-
լիսեցի) տեսք Ա. Բ. Գ. 1891—94—96 թ. Թիֆ-
լիս 70—60—90 կոպ.
40—Փորձանելերի բժշկարան. Բառու Բրօքէր. թարգմ. Ք. Օհա-
նեան, 1892. Թիֆլիս 20 կոպ.
41—Զուարեալի բժշկութիւնը. Դր. Գ. Քոլոշեան 1893. Կ.
Պոլիս 60 կոպ.
42—Դաստիարակութիւն, Հ. Սպիհներ, թարգմ. Մ. Ղազ-
րեան, 1892, Թիֆլիս 1 բուր.
43—Առողջապահութիւն երիտասարդաց, թարգմ. Նազիկիան,
1886. Կ. Պոլիս 75 կոպ.
44—Դիմելերիս. Բժ. Ն. Խսանակեան, 1902, Ազերսահմանը-
պուր. 5 կոպ.

ՆԻՒԹԵՐԻ ՑԱՆԿԸ

ԱՌԱՋԻՆ ՄԸՍ

ՕՐԳԱՆԻԶՄԻ ԵԽ ՍՆՈՒՆԴԻ ԲԱՂԱԴՐՈՒԹԻՒՆԸ Եջ.

Մարմինից արտաքսւած նիւթեր	7
Գործարանաւոր բջիջների կազմութիւնը	9
Գործարանաւոր և անգործարանաւոր տարրեր	10
Սննդական նիւթերի համեմատական չափերը, թէժիմ	14

ԵՐԿՐՈՐԴ ՄԸՍ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՑԱՐՄԱՐ ՈՒՏԵԼԻՔՆԵՐ

Կալժ	17
Չու	»
Միս	18
Չուկ	»
Միսի պատրաստութիւնը	19
Հում միս	»
Մսաջուր	»
Խաշած միս	20
Ջողիով եփած միս	»
Խորոված միս	»
Ցորենալիւր	21
Գարեալիւր	»
Վարսակալիւր	»
Եղիպտացորենի ալիւր	»
Բրինձ	»
Գետնախնձոր	»

Տապիօկա	21
Արարոտ	»
Սալէպ	»
Ջաղանակ	»
Խմորեղին, կարգանդակ, բիտկուտ	»
Խիւս	22
Լորիա, բալլայ, ոսպ, հայլն	»
Կաղամբ, ծներեկ, սունկ, սպանախ, կանկառ, ստեղղին, հազար, զգում, չողում, շողգամ, տօմատ, թրթնչակ և այլն .	23
Նարինջ, լիմոն, կեռաս, ելակ զեղձ, խնձոր, խաղող, թուզ, սալոր, տահնձ, արմաւ, սերկելիլ, ծիրան, ընկոյզ, հայլն .	24
Համեմանիր	»
Ազ	26
Ջարար	»
Քացախ	»
Վանիլ, տարչին, անիսօն, սոխ սխտոր, և այլն	»
Ջուր	»
Ուկելից խմիչքներ	»
Թէյ, սուրջ, կակաօ, չօկոլադ	28

ԵՐԿՐՈՐԴ ՄԸՍ

ԱՌԱՋԻՆ ԵԽ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՍՆՈՒՆԴԸ

Մայրական զիեցում	29
Սամնզուով զիեցում	33
Արհեստական զիեցում	34
Երեխան ծծից կտրել	39
Վերջնականապէս ծծից կտրել	»
Ծծից աստիճանաբար կտրելու առաւելութիւնը	40
Ծծից կտրւած երեխաների չորս ճաշերը	41
2-ից 7 տարեկան երեխաների մնունդը	42
Կերակուրների ընտրութիւնը	»

Կանանչեղիններ	»
Միսի չափազանցութիւնը	43
Խմորեղիններ	44
2-ից 7 տարեկան երեխաների չորս ճաշերը	»
7-ից 15 տարեկան երեխաների սնունդը	45

Զ Ա Բ Բ Ո Ր Գ Մ Ը Ս

ՎԱՏԱՌՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄՆՈՒՆԴԸ

Երեխայի գուրս զնալլ	47
ծիծ չի բոնդ երեխաներին կերպելլ	48
Դժուար զարգացող երեխաների մնունդը	49
Մննդաբար զբեխներ (օրնա)	51
Ատամնաւորութեան հետեանքները	»
ծծից կտրելու հետեանքները	52
Աճումի հետեանքները	»
Սուր հիւանդութիւնների մէջ մնունդը	»
Ուտելիքներ	54
Սկարլատին, Զերմատենդ, Դիֆտերի, Թոռային բորբում	55
Ըմպելիններ	»
Խրոնիք հիւանդութիւնների մէջ մնունդը	56
Անմարսողութիւն	»
Ոսկորների թուլութիւն	58
Երեան պակասութիւն	59
Աւշային կազմւածք և խոյլ	60
Թոռախտ	»
Զգային երեխաների մնունդը	61
Հիւանդութիւնից նոր վերկացող երեխաների մնունդը	62
Մնունդի ընարութիւնը	63
Ախորժակը ինչպէս բաց անկլ	64
Դժուար մարսողութիւնը ինչպէս հեշտացնել	»

ՀԵՊԻՆԱԿԻՆ ՈՒՄԻՉ ԳՈՐծԵՐԸ

ՄԱՐԻԵՄ Թէ ՀԱՅԿԱՆՈՒՃ, վէպ, (սպառւած):
ՓՈՒՆՑ ԳԻՏԱԿԱՆ (քուն և երազ), 60 կոպէկ:
ԱՂՋԿԱՆ ՄԸ ՑԻՂԱՏԱԿԱՐԱՆԸ, վէպ, 60 կոպէկ:
ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՄԵԾ ԹՁՆԱՄԻՆ, հրատարակութիւն
Պարսկաստանի հակալկոլական ընկերութեան, ձրի:
ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄՆՈՒՆԴԸ, հրատարակութիւն «Թաւրիզի Լա-
րանական ընկերութեան», 2 դռան (50 կոպէկ):



ԿՐԵՒԹՈՒ ՎՐԻՊԸՆԵՐ

Էջ	Տար.	Ա Խ Ա Լ	Ո Ւ Դ Ի Դ
8	24	300	3000
9	6	շինքն	շինքն է
10	18	համար	—
“	31	արտաքսում են	արտաքսումին
12	21	ատաղին	ատաղձն
13	1	(131 մսխալ)	(2605 մսխալ)
“	11	ծառայում	ծառայում,
15	16	շատ	բատ
16	10	մեղուազ	միզաւազ
19	14	եղանակը	եղանակը,
20	16	սոռ	եռացած
21	2	է	է;
25	16	պէտք	պէտք է
28	13	երկորդ	երկորդ
“	14	գործնական	գործածական
34	2	վերային	վերային
38	29	տալ:	տալ,
40	15	անզգուշաբար	անզգալաբար
“	24	մսաշուրն	մսաշուրն,
42	1	երկունքից	երկունքից
44	30	մէզամասը	վզամասը
“	31	կասկուած	կասկառած
46	20	կարկանդակավաճառ-ների	կարկանդակավաճառ-ների
61	3	գործոն	գործում

		Ճւղի	Ճւղի
«	13	Ենիկաներ	Երեխաներ
«	17		Կպերդ
33	26	Խշերդ	21,06
30		Սուցակում	
	16, 38	Ճախալից յիտոյ	23,40
		բաց տողերի տռաջ պէտք	25,74
		Է աւելացնել մոռացված	28,08
		Այս թռաւնչանները	35,10

Ճիշտություն	Անհապակ	10
մշակում		12
(ամսին 800)		11
հաղորդում		11
ուղարկում		01 01
բարեկարգ	Ովանական	11 01
նորութ		01 02
		1 01 12
Ն զայր	զայր	01 02
բարզեց	բարզեց	01 02
մարտնչող նոր	մարտնչող	11 02
միշտուի	միշտուի	01 02
լուս	լուս	02 06
պակախքնամ	պակախքնամ	01 01
մշտական	մշտական	10
բժիշտում	բժիշտում	01 01
զանարի	զանարի	02 03
նորթառոյ	նորթառոյ	10
առաջարկություն	առաջարկություն	02 01
Ժիմ	Ժիմ	10
Նորութ	Նորութ	10



2013



